

Ս. ԾՆՆՈՒԵԱՆ տօնին առթիվ երեսփոխան Պրայըն Մէյ կ'այցելէ Ս. Նշան եկեղեցի եւ Գեմարիճի Հայ կեդրոն

Կիրակի, 7 Յունուար 2017-ին, Ս. Ծննդեան տօնին առթիվ, Գեմարիճի Ս. Նշան Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագին ներկայ գտնուեցաւ Գանատա-Հայաստան Խորհրդարանական խմբակցութեան նախագահ եւ Գեմարիճի ընտրատարածքը ներկայացնող երեսփոխան Պրայըն Մէյ, որ վերջերս ընտրուած էր վերոնշեալ խմբակցութեան ատենապետ:

Պատարագի աւարտին, երեսփոխան Մէյ հաւատացեալներուն ընթերցեց Գանատայի վարչապետ Թրուտոյի կողմէ հրապարակուած յատուկ շնորհակարան ուղերձը, ուղղափառ բոլոր եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնին առթիւ:

Պատարագէն ետք, Մէյ նաեւ իր մասնակցութիւնը բերաւ եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած ճաշկերոյթին, ուր նաեւ առիթը ունեցաւ զրուցելու ներկայներուն եւ շրջանի Հայ Գատի յանձնատնային անդամներուն հետ:



Հայաստանի Խորհրդարանը Ճանչցաւ Եզիսիներու Ցեղասպանութիւնը



ՀՀ Ազգային ժողովը Յունուար 16-ին առաջին ընթերցմամբ միաձայնութեամբ ընդունեց «Ահաբեկչական խմբաւորումներու կողմէ իրենց վերահսկողութեան տակ գտնուող Իրաքի տարածքներու մէջ եզիսի ժողովուրդի նկատմամբ 2014-ին իրականացուած ցեղասպանութեան դատապարտման մասին» նախագիծը: Նախագիծը զրուցեցաւ քուէարկութեան եւ ընդունուեցաւ 91 կողմ եւ 1 ձեռնպահ ձայներով:

Նախագիծ յայտարարութեան հեղինակներուն՝ ազգութեամբ եզիսի պատգամաւոր Ռուստամ Մախմուդեանին, Վահրամ Բաղդասարեանին եւ ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեանին միացած են նաեւ խմբակցութիւնները՝ «Հայաստանի հանրապետական կուսակցութիւն» խմբակցութիւնը, «Ծառուկեան» խմբակցութիւնը, «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» խմբակցութիւնը, «Եր» խմբակցութիւնը:

Նախքան քուէարկութիւնը Հանրապետական Սամուէլ Ֆարմանեան նշած է, որ բրած է առաջարկներ, որոնք, կարծես թէ, չեն ընդունուած հեղինակներուն կողմէ. «Ոչ մէկ ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի մէջ ճանաչում բառը չ'օգտագործուիր, մենք շատ երկիրներ կը մեղադրենք ընտրովի վերաբերմունքի համար, մենք ալ նոյնը չընենք ու ամբողջութեամբ դատապարտենք», - կոչ բրած է ան:


ՀՅԴ ԳԵՄ-ը կ'աջակցի վիրաւոր զինուորներուն

Ամանորի նախօրեակին, ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութիւնը առցանց նուիրահաւաք մը կազմակերպեց աջակցելու համար Երեւանի «Հերացի» հիւանդանոցի վերականգնողական կեդրոնի ծախսերուն: Այս նոր կեդրոնը հնարաւորութիւն կու տայ, որ վիրաւոր զինուորներուն (rehabilitative) վերականգնողական բուժումը սկսի անմիջապէս եւ կատարուի անվճար:

ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը նախաձեռնեց «Նուիրագիր փոխան նուէրի» ծրագիրը, զօրակցելու վերականգնողական նոր կեդրոն կառուցման աշխատանքներուն: Նուիրահաւաքը կը շարունակուի:

Այցելեցէ՛ք նուիրահաւաքի կայքէջը www.heratsirehab.com:

«Աջակցութիւն վիրաւոր զինուորներին»-ը ոչ-կառավարական կազմակերպութիւն է (Non Governmental Organization (NGO)):



2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian



ARZ
fine foods

*Home to
Authentic
Mediterranean Gourmet*





Z.S.A.



ամեակի

Պաշտօնական Հանդիսություն՝

Կազմակերպութեամբ՝ Հ.Յ.Դ.
«Միհրան Փափազեան» եւ «Սարգիս Չէյթեան» Կոմիտէներու

Օրուան Պատգամաբեր
Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կ.Կ.ի Ներկայացուցիչ՝
Ընկեր Տարօն Տէր Խաչատուրեան

Գեղարուեստական Յայտագիր

Կիրակի, 21 Յունուար 2018

Երեկոյեան ժամը 7-ին

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի «Բաստրմաճեան» սրահ
3400 rue Nadon, Montreal, Quebec H4J 1L5

Լոյս տեսած է պատմաբան Մելինէ Անումեանի «Ճանաչում եւ դատապարտում. Երիտթուրքերի դատավարութիւնները» գրքի անգլերէն թարգմանութիւնը

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ Անթիլիասի տպարանը հրատարակած է Արեւմտահայոց հարցերու ուսումնասիրութեան կեդրոնի աւագ գիտաշխատող, թրքագէտ, պատմական գիտութիւններու թեկնածու Մելինէ Անումեանի «Ճանաչում եւ դատապարտում. երիտթուրքերի դատավարութիւնները (1919-1921 եւ 1926 թթ.)» մենագրութեան անգլերէն թարգմանութիւնը:

Գիրքի թարգմանութիւնը եւ հրատարակումը հովանաւորած է Պէյրութի մէջ գործող «Նաչիկ Պապիկեան» հրատարակչական հիմնադրամը: Գիրքի թարգմանիչն է քաղաքագիտութեան դոկտոր ոլբացեալ Արա Գաբրիէլեանը, իսկ անգլերէն հրատարակութեան խմբագիրը՝ Արեւիկ Գաբրիէլեանը: Գիրքի գրախօսներն են Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ակադեմիայի պատմութեան հիմնարկի տնօրէն, փրոֆեսէօր Աշոտ Մելքոնեանը եւ թրքագէտ, պատմական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսէօր Արսէն Աւագեանը:

Ստորեւ կը ներկայացնենք Աշոտ Մելքոնեանի գրախօսութիւնը՝ Մելինէ Անումեանի «Ճանաչում եւ դատապարտում. երիտթուրքերի դատավարութիւն-

ները (1919-1921 եւ 1926 թթ.)» աշխատութեան անգլերէն հրատարակութեան կապակցութեամբ:

Հայ գիտաքաղաքական շրջանակները Հայոց ցեղասպանութեան թուրքական ժխտողականութեան դէմ հետեւողական պայքար են մղում երկար տարիներ: Այդ հարցում հայկական կողմի անգիջում պահուածքը պայմանաւորուած է թուրքական կեղծարարութիւնը բացայայտելու, ճշմարտութիւնը համաշխարհային հանրութեանը հասցնելու մտահոգութեամբ: Սակայն տարուող երկարատեւ ու դժուարին պայքարում հայկական մտացոլութեան տալով Մեծ եղեռնի հետեւանքների վերացման, այն է՝ հատուցման հասնելու կենսական խնդիրը, աւելի շատ ընթացել են ճանաչման հարցի հետապնդման ճանապարհով, որի կարեւորագոյն բաղադրամասերից է եղել տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը փաստող եւ դատապարտող բանաձեւերի ընդունումը:

Իրականութիւնն այն է, որ արդէն Ա. Աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի իրականացրած ցեղասպանական քաղաքա-

կանութիւնը կասկած չէր յարուցում ժամանակի համաշխարհային հասարակայնութեան շրջանում: Պատահական չէ, որ Հայոց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման գործընթացի սկիզբը համարուած է Անտանտի երկրների՝ Ռուսաստանի, Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսայի կողմից 1915թ. մայիսի 24-ի համատեղ յայտարարութիւնը, որում օսմանեան իշխանութիւնները մեղադրուած էին հայերի նկատմամբ իրականացուող զանգուածային կոտորածների մէջ, եւ այդ ոճրագործութիւնը որակուած էր որպէս մարդկութեան ու մարդկայնութեան դէմ ուղղուած յանցագործութիւն:

Շուտով՝ պատերազմում Օսմանեան կայսրութեան պարտութիւնից յետոյ թուրքական հասարակութեան շատ շերտեր եւս ձեռնամուխ եղան երիտթուրքերին մեղադրանք ներկայացնելու գործին: 1919-1921 թուրքական ռազմական ատեանները դատական գործ սկսեցին իթիհատական կուսակցութեան պարագլուխների նկատմամբ: Ի թիւս բազմաթիւ, այդ թւում՝ կայսրութեանը պատերազմի մէջ ներքաշու մեղադրանքների, դատարանները երիտթուրք ամբաստանեալներին մեղադրեցին հայերի եւ այլազգիների զանգուածային կոտորածներ կազմակերպելու համար:

Պատահական չէ, որ շատ հայ հետազոտողներ, գիտակցելով օսմանեան վերոյիշեալ ռազմական ատեանների սկսած դատական գործընթացների, դրանց ընդունած վճիռների գիտաճանաչողական կարեւորութիւնը, յաճախ են անդրադարձել այդ խնդրի լուսաբանմանը՝ իրաւացիօրէն այդ իրադարձութիւնները գնահատելով որպէս թուրքական պաշտօնական շրջանակների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման իրողութիւն: Նման հետազոտողների մէջ արդէն իր հաստատուն տեղն ունի երիտասարդ թուրքագէտ, շնորհալի պատմաբան Մելինէ Անումեանը:


Ուրախալի է, որ կարեւորելով յատկապէս օտարալեզու ընթերցողի համար խնդրոյ առարկայ նիւթի գիտաքաղա-


քական նշանակութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Նաչիկ Պապիկեան» հրատարակչական խորհուրդը ձեռնարկել է սոյն աշխատութեան թարգմանութիւնն ու հրատարակութիւնը անգլերէնով:

Անումեանի գրքի անգլերէն տարբերակի տպագրութեան առնչութեամբ կ'ուզէինք մեր գոհունակութիւնը յայտնել նաեւ այն պատճառով, որ սոյն աշխատութեան թարգմանութեան պատասխանատու եւ շատ շնորհակալ գործն իրականացրել է մեր վաղեմի բարեկամ, ճանաչուած հասարակական-կուսակցական գործիչ, իսկական հայ մարդ, արծարծուող խնդրին քաջատեղեակ Արա Գաբրիէլեանը: Տարիներ առաջ նա առանձնակի ոգեւորութեամբ էր ձեռնամուխ եղել այս գործի թարգմանութեանը. յաճախ էր խօսում մեր համագալին գործերում կատարուող աշխատանքի պահանջուածութեան մասին: Նա ամենայն բժախնդրութեամբ էր իրականացնում թարգմանութիւնը՝ ժամանակի եզրաբանութեանը հաւատարիմ մնալու, անգլալեզու ընթերցողին հեղինակի ասելիքը ճիշդ հասցնելու, խնդրի էութիւնը խորապէս բացայայտելու մտահոգութեամբ:

Աւա՛ղ, Արա Գաբրիէլեանին բախտ չվիճակուեց տեսնել այս աշխատութեան անգլերէն հրատարակութիւնը: Աշխատանքի վերջին փուլում կտրուեց նրա կեանքի թելը: Բայց թարգմանութեան գործն իր աւարտին հասցրեց ամուսնուհետ սփիւռքում տասնամեակներ շարունակ իր հայապահպան գործունէութեամբ աչքի ընկած, Արեւմտեան Հայաստան էրգրի ճամբաներով անցած, իսկական մտաւորական Արեւիկ Գաբրիէլեանը:

Համոզուած ենք, որ սոյն աշխատութեան անգլերէն հրատարակութիւնը կ'ունենայ լուրջ ճանաչողական հետեւանքներ Հայոց ցեղասպանութեան խնդիրը համաշխարհային հանրութեանը հասցնելու եւ թուրքական մերժողական քաղաքականութեան անանկութիւնը բացայայտելու հարցում:

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website www.arsarmenianschool.ca

 ԶՕՍ-ի Մոնթրէալի Սօւէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն Զորեքշաբթի ժամը 11:30-էն 3:30: Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:

 Ghadir Meat & Restaurant
T. 416-750-7404
F. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

 ANI BAKERY AND FINE FOODS
OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 8AM - 6PM
SUNDAY 8AM - 3PM
LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN



 Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine
1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5
Tel 416 745 3111
Fax 416 745 9337

 ANI Restaurant
905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

 Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

 hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

 TASTE OF ALEPPO
Crown Pastries
Fine Middle Eastern Pastries
2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

 I.D.A.
Part of the  family of pharmacies.
Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2
Tel. : 416.449.2040
Fax: 416.449.2048

 ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Ուել հաշմանդամ Զինուոր Պէտք Չէ Անտեսուի

«Հերացի» համալսարանական թիւ 1 հիւանդանոցի տարածքին վիրաւոր գինուորներու համար կառուցուող վերականգնողական կեդրոնին մէջ բուռն շինարարական աշխատանքներ կ'ընթանան:

Ըստ Panorama.am-ի՝ «Աջակցութիւն վիրաւոր գինուորներին եւ գինուորական հաշմանդամներին» հասարակական կազմակերպութեան նախագահ Հայկուհի Մինասեան նշած է, որ շինարարները գիշեր ու ցերեկ կ'աշխատին, որպէսզի մինչեւ Յունուար 28 չէնքը յանձնեն շահագործման:

Նշենք, որ հաշմանդամ գինուորներու վերականգնողական կեդրոնի բացումը կը նախատեսուի Յունուար 29-ին: Կեդրոնին մէջ համալիր վերականգնողական բուժում պիտի ստանան տարբեր տարիներուն վիրաւորուած, հաշմանդամ դարձած գինուորացիները, պիտի ցուցաբերուի հոգեբանական աջակցութիւն, իրականացուին նաեւ ուսումնական ծրագիրներ, պիտի փորձեն լուծել նաեւ անոնց զբաղուածութեան խնդիրը:

Հայկուհի Մինասեանի խօսքով՝ կեդրոնը պիտի համալրուի գերժամանակակից սարքերով: «Շուտով թանկարժէք սարքերը պիտի բերուին Հայաստան: Ամէն ինչ պիտի ընեն, որպէսզի հաշմանդ գինուորները անհրաժեշտ բուժում ստանան Հայաստանի մէջ: Կը կարծեմ, որ այս կեդրոնի բացումէն ետք գինուորները այլեւս արտերկիր երթալու

կարիք չեն ունենար»:

Հասարակական կազմակերպութեան նախագահը նշած է, որ կեդրոնի ստեղծման գաղափարը յառաջացած է ապրիլեան պատերազմէն ետք, երբ անհրաժեշտութիւն յառաջացած է մարտական գործողութիւններու ժամանակ վիրաւորուած գինուորներու բուժումը կազմակերպել արտերկրի մէջ, քանի որ Հայաստանի մէջ գործող վերականգնողական կեդրոնները համապատասխան հնարաւորութիւն եւ յազեցուածութիւն չունին:

«Ապրիլեան պատերազմի օրերուն շատերը կը խօսէին ողնաշարի, գանկոզեղի վնասուածք ստացած գինուորներու բուժումը արտերկրի մէջ կազմակերպելու մասին: Դուրսը վերականգնողական կեդրոններու մէջ բուժումը բաւական թանկ արժէ, իսկ վերականգնողական բուժումը ամիսներու հարց չէ, այլ տարիներու: Ապրիլեան պատերազմէն ետք մասնագէտները կամաւորական սկզբունքով գինուորական հիւանդանոց գացին, անոնք սկսան աշխատել վիրաւոր գինուորներու հետ, ունեցան այնպիսի արդիւնքներ, որոնք շատերու համար զարմանալի էին: Ծրագիր կազմեցինք, ներկայացուցինք այն ժամանակ Առողջապահութեան նախարար Արմէն Մուրադեանին: Արդիւնքով, որոշուեցաւ ստեղծել այս կեդրոնը եւ աջակցիլ մեր հաշմանդամ գինուորներուն», - ըսած է Հայկուհի Մինասեան:



Անոր խօսքով՝ գաշտային աշխատանքներ կատարած են, որպէսզի գտնէին տարբեր տարիներու վիրաւորուած գինահաշմանդամները: «Զինուորներ կային, որոնք տարիներ շարունակ գամուած էին անկողինը, սակայն հիմա վերականգնողական բուժումներէն ետք արդէն ոտքի կանգնած են: Որեւէ գինահաշմանդամ անտեսուած պէտք չէ ըլլայ, - ըսած է Հայկուհի Մինասեան՝ աւելցնելով, որ

Հայաստանի մէջ կայ 9000 հաշմանդամ, տարեկան 200-300-ով հաշմանդամ գինուորներու թիւը կ'աւելնայ: Վերականգնողական կեդրոնին մէջ մնալուն բուժում կրնան ստանալ 30-40 հաշմանդամ գինուորներ, իսկ շարժական բուժում՝ աւելի շատ հաշմանդամներ: Նշենք, որ վերականգնողական բուժումը կ'իրականացուի անվճար:

Լոյս տեսաւ Վրէժ-Արմէնի «ՈՍՏԱՅՆ 7 - ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ» հատորը

Լոյս տեսաւ, դարձեալ առցանց, Վրէժ-Արմէնի «Ոստային 7 - Համաստեղութիւն» հատորը, որ երրորդն է, որ անտպագիր կը հրատարակուի: Ան կը համարմբէ հեղինակին գրած ուղեգրութիւնները Սփիւռքի կարգ մը գաղութներ կատարած իր ճամբորդութիւններուն առթիւ: Գրքին ներածականին մէջ Վրէժ-Արմէն կը նշէ. «Տեղեկագրութիւն չէ ըրածս, այլ արձանագրութիւնը տպաւորութիւններու եւ անոնց առթած մտորումներուն: Օրագրային բնոյթ չունին անոնք, սակայն կա'յ պատմողական գիծ մը, որ կրնայ հետաքննել ընթացումը»:

Ուղեգրութիւնները կը վերաբերին Թորոնթօ, Վանգուվըր, Աթլանթիկ, Մասաչուսեց, Ֆլորիտա, Ֆրեզնօ, Աւստրալիա, Սուրիա ու մանաւանդ Լիբանան այցելութիւններու, իսկ Լիբանանը «կարեւոր տեղ կը գրաւէ այս հատորի մէջ, քանի որ իրերու բերմամբ բազմիցս այցելել եմ Մայրիներու երկիրը», կը գրէ հեղինակը, ապա կ'աւելցնէ. «Միւս կողմէ, կը բացակային բազմաթիւ գաղթօճախներ, ուր գացել եմ ու վայելել նաեւ անոնց ասպնջականութիւնը, սակայն յետոյ «Ոստային»-ներու չեն վերածուել այդ այցելութիւնները, չեմ գիտեր ինչո՛ւ: Աւելցնեմ, սակայն, որ գրեթէ իւրաքանչիւր ճամբորդութեանս արձանագրութիւնը պահուած է անկապ օրագրի կամ նամակի ձեւով, եւ օր մը թերեւս ի

վերջոյ անոնք եւս կը գրուին, կը պատմուին... Օր մը»:
Գրութիւններուն կ'ընկերանան բազմաթիւ լուսանկարներ, որոնք չեն ընդգրկուած էջերը զարդարելու, «այլ շրջապատ մը կամ մթնոլորտ մը ցոյց տալու համար, բառերով չըսուածը պատկերով արտայայտելու նպատակով»:
Վրէժ-Արմէնի ուղեգրական այս պատումները ցարդ ամփոփուած են «Ոստային 3 - Հաղորդութիւն» եւ «Ոստային 6 - Ժամագրավայր» հատորներուն (երկուքն ալ յատկացուած Հայաստան կատարուած ճամբորդութիւններուն) եւ ներկայ հատորին մէջ: Այս վերջինին զուգահեռաբար պատրաստուած է ու շուտով լոյս կը տեսնէ «Ոստային 8 - Ծանապարհներ»-ը, որ նոյնպէս կը բաղկանայ «ուղեգրութիւններէ, արձակուրդային բնոյթի, որոնց մէջ, սակայն, գրեթէ միշտ առկայ են հայրութեան հետ առնչումներ կամ մարդկային ապրումներ՝ ոչ միայն հայրութեան առնչուած»:
Հեղինակին չորս վերջին հատորները մատչելի են ընթացողին Հայերէն blog կայքէջի «Գիրքեր» բաժնին մէջ (<https://hayerenblog.wordpress.com/Գիրքեր/>): Այնտեղ կարելի է կարդալ նաեւ հեղինակի ոչ-անձնական բնոյթի նամականին, որ հետզհետէ կ'ամբողջանայ:

ՀՄԸՄ Լաւալ

ՀՄԸՄ Գանատայի Երջանի 48-րդ մարզական խաղերը որ նուիրուած է ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակին տեղի պիտի ունենայ Լաւալ 31 Օգոստոսէն մինչեւ Սեպտեմբեր 3, 2018ը: Հրաւիրուած են մեր սիրելի բոլոր հայրենակիցները, Երկուշաբթի 5 Փետրուար 2018, երեկոյեան ժամը 7:00-ին, Լաւալի Հայ կեդրոնի Պարոնեան սրահ տեղեկութիւններ ստանալու համար ապագայ գործունէութեան մասին ու ներդրում բերելու իրենց նախասիրած յանձնախմբային աշխատանքներուն մէջ:

Յատելալ մանրամասնութիւններու համար հաճեցէք հեռաձայնել՝ Բոյր Սոնա Լախոյեանին բջջ: 514 979 6272

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Պէքերեճեան

Achat	Սնուտոր	Purchase
Hypothèque	Սնարժ Կարածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կարածք	Estate
Marriage	Սնունութիւն	Marriage
Procuration	Փոխաւորագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



TRY HEARING AIDS
RISK-FREE

Call 416 754-4327

.....
699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

.....
Parkway Mall, 85 Ellesmere Road,
#65 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

.....
www.hearingaidsource.ca



-
- Free Hearing Tests
 - No obligation Hearing Aid Trial
 - Hearing Protection
-

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable

Կապրիել ինքնաշարժներու վաճառականական ընկերութիւնը (Group Gabriel) կը տօնէ իր 30-ամեակը



Ինքնաշարժներու «Կապրիել» վաճառականական ընկերութիւնը այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնէ հայ համայնքին՝ իրենց աջակցութեան համար:

Մեր ընկերութիւնը ունի 80 հայ պաշտօնեայ՝ զանազան բաժանմունքներուն մէջ, ներառեալ բարձրաստիճան պաշտօններ, ինչպէս՝ տնտեսական բաժնի փոխ տնօրէնուհի եւ առուծախի կեդրոններու տնօրէններ:

Մեր յաջողութիւնը կը պարտինք մեր պաշտօնեաներուն տարած աշխատանքին եւ հաւատարմութեան:

Ընկերութեան 30-ամեակին առթիւ ուրախութեամբ կը յայտարարենք, թէ նոր՝ 30-րդ բաժանմունք մը պիտի հաստատուի Մոնթրէալի մէջ, այսպիսով կը հանդիսանանք Քեպէգի ինքնաշարժներու վաճառատուներու մեծագոյնը:

«Կապրիել» ընկերութիւնը բարեբեր տարի մը կը մտայնէ հայ համայնքին:

Group Gabriel

Վանգուլըրի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի Ամանորի խրախճանք



Վանգուլըրի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանը, տօնական օրերու սեմին կազմակերպած էր Ամանորի խրախճանք մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 16 Դեկտեմբեր 2017-ին, Հայ կեդրոնի «Լազարեան» սրահէն ներս, ներկայութեամբ ծնողներու, ուսուցիչներու եւ աշակերտներու:

Խրախճանքին ընթացքին մանուկները մասնակցեցան զանազան խաղերու, ճաշակեցին համեղ ճաշեր ու քաղցրեղէն:

Աշակերտները նաեւ պատրաստած էին ամանորեան եւ ծննդեան յատուկ երգեր, արտասանութիւններ, որոնք արժանացան ներկաներուն գնահատանքին:

Յայտագրի աւարտին վարժարանի աշակերտները ամանորի ուրախ երգերով դիմաւորեցին Հայաստանէն ժամանած Կաղանդ պապան եւ ստացան նուէրներ:

Մտորիկ Սիւլահեան Զափանեան

Ամանորը եւ Ս. Ծնունդը Վանգուլըրի Հայ կեդրոնէն Գերս



Վանգուլըրի ՀՕՄ-ի «Արագ» մասնաճիւղի կազմակերպութեամբ, Կիրակի, 31 Դեկտեմբեր 2017-ին, տեղի ունեցաւ Ամանորի պարահանդէս Վանգուլըրի կեդրոնը գտնուող «Century Plaza» պանդոկէն ներս, ներկայութեամբ 300 հայորդիներու, որոնք հիւրասիրուեցան հայկական քրոնեակով, համադամ ճաշերով եւ անուշահամ քաղցրեղէնով:

Չունարկը ճոխացուց Մոնթրէալէն յատկապէս հրաւիրուած DJ Գէորգը, որ խանդավառեց ներկաները մինչեւ առաւօտեան կանուխ ժամը: «Արագ» մասնաճիւղի վարչութեան անունով խօսք առաւ ընկերուհի Գլարա Յակոբեանը, որ անդրադարձաւ ՀՕՄ-ի գործունէութեան: Հայր Գարեգին Վարդապետ Շիրաբոյեանի աղօթքով ներկաները դիմաւորեցին Նոր Տարին:

Շաբաթ, 6 Յունուարին ճրագալոյցի առիթով Սուրբ եւ Անմահ Պատարագ տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ապա ներկաները ճաշակեցին Տիկնանց միութեան պատրաստած խմորեղէն յատուկ ճուղի սեղանը, իսկ յաջորդ օրը Ս. Ծնունդին առթիւ Պատարագ եւ Զրօրհնէք տեղի ունեցաւ, որուն յաջորդեց ճաշկերպութիւնը կազմակերպութեամբ եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց միութեան:

Մտորիկ Սիւլահեան Զափանեան

Լուրեր Համազգայինի «Սանահին» մասնաճիւղէն



Ուրբաթ, Դեկտ. 15-ին, երեկոյեան ժամը 6-7 տեղի ունեցաւ «Փոքրերու պատմութեան ժամ»ը Համազգայինի «Մուշեղ Իշխան» գրադարանէն ներս, ուր Մեղրիկ Զէյթունեան ներկայացուց Անահիտ Սարգիսեանի «Զոր գընգը կաղանդ է» պատմութիւնը:

Չորեքշաբթի, Դեկտեմբեր 13-ի երեկոյեան ժամը 7:30-ին, «Ահարոնեան» սրահէն ներս, հակառակ օդի աննպաստ պայմաններուն, 50 արուեստասէրներ ներկայ եղան Համազգայինի «Թէյ, սուրճ եւ կարծիքներ» ակումբի «Այվազովսկիի հայկականութիւնը՝ ծովանկարչութեան ընդմէջէն» նիւթին ներկայացման: Ակումբի պատասխանատու ընկՏ. Տիրուկ Մանուկեան բացումը կատարեց ձեռնարկին եւ ներկայացուց դոկտ. Մովսէս Միրանի Հերկեղեանի կենսագրականը: Դոկտ. Հերկեղեան նախ ներկայացուց արուեստագէտին կեանքը, մանկութենէն մինչեւ ուսանողական տարիներն ու դիմագրւած մարտահրաւէրները եւ ապա սահիկներու միջոցաւ վերլուծումը կատարեց իր մեծ թիւով գործերուն:

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիօժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՄՈՆԹԵՐԵԱՆ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՉԱՄԻԼԵՆ- «Հայ Կեդրոնի» ռատիօժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Այլևս Ոչ Մէկը Չի Կարող Հայաստանին Մեղադրել, Որ Հայաստանը Չփորձեց Կարգաւորել Թուրքիայի Հետ Յարաբերութիւնները. Կիրո Մանոյեան

Հայաստանին 99,9 տոկոսով ոչինչ չի կարող ստիպել առ ոչինչ չյայտարարել հայ-թուրքական արձանագրութիւնները: «Թերթ»-ի հետ զրոյցում ասաց ՀՅԴ Բիւրոյի անդամ, Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեանը: Ըստ նրա, այլևս ոչ մէկ չի կարող Հայաստանին մեղադրել, որ Հայաստանը չփորձեց կարգաւորել Թուրքիայի հետ յարաբերութիւնները: Նա նշեց, որ նախագահը արձանագրութիւնները առ ոչինչ է համարելու գարնանը, երբ աւարտուում են նախագահի իր լիազօրութիւնները: Եւ դա պատահական չէ: Կիրո Մանոյեանը նշեց, որ Սերժ Սարգսեանը հեռաւորութիւն է թողնում միջնորդներին՝ անելիքներն անել, որ չասեն, թէ ժամանակ չկար կարգաւորելու իրավիճակը:

ՀԱՐՑՈՒՄ.- ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը նախորդ տարի, խօսելով հայ-թրքական արձանագրութիւնների մասին, ասաց, որ 2018թ.-ի դարուն մենք մոտք կը գործենք առանց այս արձանագրութիւնների: Ձեր կարծիքով, այս յայտարարութիւնը մնո՞ւմ է ուժի մէջ, մենք առ ոչինչ ենք յայտարարելու այս արձանագրութիւնները հաշուած ամիսներ անց:

ԿիրՕ ՄԱՆՈՅԵԱՆ.- Շատ անհամբեր եմ, թէ երբ է գալու դարնան առջին օրը՝ մարտի 1-ը, եւ, վերջապէս, ձեռագրատուած լինենք այս արձանագրութիւններից: Այդ արձանագրութիւնները իրականում կեանքի չկոչուեցին, բայց իրաւականօրէն դրանք կան, գոյութիւն ունեն եւ իրենց վնասը կարող են հասցնել: Դրա համար պէտք է դրանցից ձեռագրատուել: Ինչպէս նախագահն ասաց, Թուրքիան ցոյց տուեց, որ ե՛ւ բանակցութիւնների ընթացքում, ե՛ւ դրանց ստորագրումից յետոյ իրենք անկեղծ չէին, տրամադրուած չէին Հայաստանի հետ առանց նախապայմանների կարգաւորել յարաբերութիւնները: Ձեմ կարծում, որ առաջիկայ 7-8 շաբաթների ընթացքում ինչ-որ բան կը փոխուի եւ Հայաստանի նախագահը Թուրքիայի քայերից բաւարարուած կը զգայ ու յետ կը կանգնի իր յայտարարութիւնից: Նախագահը շատ յստակ ասաց իր ասելիքը, բայց եթէ յիշում էք, դրանից առաջ էլ «գրողի ծոցն էր» ուղարկել այդ արձանագրութիւնները:

Հարցը միայն Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները կարգաւորելը չի եղել, թէեւ գլխաւոր նպատակը դա էր, հարցը նաեւ այս գործընթացում ներգրաւուած միջնորդներին՝ Արեւմուտքին, Հայաստանը որպէս վստահելի գործընկեր ներկայացնելն էր: Նախագահը հիմա էլ ձգում է, որպէսզի վստահելի գործընկերոջ կերպարը պահպանուի: Բայց ժամանակն անցել է: Արեւմուտքն էլ այսօր չի ասում այն, ինչ ասում էր ստորագրման տարիներին: ԵՄ-ն, Միացեալ Նահանգներն կրկնում էին այն, ինչ Թուրքիան էր ասում, ասում էին, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները կը կարգաւորուեն, երբ լուծուի զարբաղեան հիմնահարցը: Այդ դէպքում, սպասէիք, թող կարգաւորուէր Ղարաբաղի հարցը, ինչո՞ւ ստորագրուեցին արձանագրութիւնները:

Հ.- Սերժ Սարգսեանի կողմից հնչեցուած այս վերջնաժամկետին Թուրքիայի իշխանութիւնները բաւական ուշ արձագանգեցին: Ձեր կարծիքով, ո՞րն է դրա պատճառը:

Կ. Մ.- Նրանք մի քիչ «չուարած» էին, չգիտէին՝ ի՞նչ պատասխանել: Բայց երբ Հայաստանի արտաքին գործերի նախարարը կրկնեց նախագահի յայտարարութիւնը, իրենք ճշշում զգացին: Անգարան մտածում էր, որ Ս. Սարգսեանի յայտարարութիւնն անտեսելով՝ հարցը կը մոտացուի, բայց այդպէս չեղաւ: Թուրքիան փորձում է մեղադրել Հայաստանին այս արձանագրութիւնների տապալման մէջ, ասում են, որ Հայաստանը համաձայնութիւնը խախտեց, որ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը փոխեց արձանագրութիւնների էութիւնը եւ այլն: Այնինչ, դա այդպէս չէ: Մենք գուցէ այս արձանագրութիւնները առ ոչինչ յայտարարելուց յետոյ միջնորդների կողմից ճշում զգանք, բայց իրենք էլ լաւ հասկացել են, թէ ո՛վ է իսկական պատասխանատուն, ո՛վ է մեղաւոր, որ հայ-թուրքական յարաբերութիւնները չկան:

Հ.- Ոչինչ չի՞ կարող Հայաստանին հետ պահել այս արձանագրութիւններն առ ոչինչ յայտարարելուց: Եթէ միջնորդները, օրինակ, համոզեն, կամ Թուրքիան մի խոստումնալից յայտարարութիւն անի, դա չի՞ կարող դառնալ

պատճառ, որ ՀՀ իշխանութիւնները մտափոխուեն:

Կ. Մ.- 99,9 տոկոսով չկայ: Թուրքիան այնքան է կրկնել այն, որ մինչեւ Ղարաբաղի հարցում իր ու Ադրբայճանի պատկերացրած դրական տեղաշարժը չլինի, քայլ չի ձեռնարկի արձանագրութիւնների ուղղութեամբ, որ դժուար թէ այս 7-8 շաբաթների ընթացքում նման բան անի: Բացի դրանից՝ 2008-2009թթ., երբ սկսուեց ֆուլթայրային դիւանագիտութիւնը, Թուրքիայի համար ինչ-որ առումով Հայաստանի հետ յարաբերութիւնները կարեւոր էին, հիմա դրանք օրակարգային չեն Թուրքիայի համար: Թուրքիան չի պատկերացնում, թէ ինչպիսի՞ յարաբերութիւններ կարող է ունենալ անկախ Հայաստանի հետ, թուրքական պետական մտածողութեան մէջ չեն պատկերացնում, թէ ինչպէ՞ս կարելի է յարաբերուել Հայաստանի հետ: Ձեմ կարծում, որ մի բան փոխուի, Թուրքիան կողմնորոշուի, թէ ի՞նչ յարաբերութիւններ կարելի է հաստատել Հայաստանի հետ:

Հ.- Ասացիք, որ Թուրքիայի ներկայիս օրակարգում Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու հարց չկայ: Իսկ մեզ համար՞: Մենք ունենք փակ սահմաններ, խնդիրներ՝ արտահանման հետ կապուած, եւ մի շարք խնդիրների լուծումը կապուած էր հայ-թուրքական արձանագրութիւնների հետ: Արդեօք այդ խնդիրների լուծման յոյսը վերջնականապէս չի՞ վերանում:

Կ. Մ.- Արձանագրութիւնների չվաւերացում լինելն անելի վնասակար է, քան՝ դրանց բացակայութիւնը: Թուրքիան այդ փաստաթուղթն օգտագործում է Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարում, Հայաստանի վրայ ճնշում գործադրելու հարցում եւ այլն:

Ինչ վերաբերում է մեր կարիքներին, ամերիկացի դիւանագէտներն այն ժամանակ համոզում էին, որ եթէ սահմանները բացուեն, լաւ կը լինի, մեծ շուկայ կը բացուի մեր առաջ, բայց մենք տնտեսական վերլուծութիւն իրականացրեցինք ու պարզ դարձաւ, որ Թուրքիան չի դառնայ մեզ համար 75 միլիոնանոց շուկայ, մինչեւ մենք մեր արտադրանքի մակարդակը չբարձրացնենք: Եթէ իսկապէս սահմանը մի օր բացուի, պատրաստ պէտք է լինենք մեր արտադրանքի մակարդակը բարձրացնել այն որակին, որը ընդունել են Թուրքիայում՝ որպէս չափանիշ:

Թուրքիայի հետ սահմանը բացելը Հայաստանի համար կարեւոր է հետեւեալ տեսանկիւնից. ՀՀ առաջին նախագահը, ով այդ թուում մեր կողմից, մեղադրուած էր թուրքասէր լինելու մէջ, ինքն էր, որ ասաց, թէ սպառնալիք կայ Թուրքիայի կողմից, եւ դրա համար բանակցեց ռուսական ռազմական խորհիւնները Հայաստանում ներկայացնելու շուրջ: Հայաստանում Թուրքիան տեսնում են որպէս ազգային անվտանգութեան գլխաւոր սպառնալիք: Եթէ Թուրքիան ուզում է, որ մենք փոխենք մեր զգացումը, պէտք է բնականոն յարաբերութիւններ ունենանք: Դա չի նշանակում սերտ յարաբերութիւններ: Դիւանագիտական բնականոն յարաբերութիւններ են պէտք, սահմանը փակ պահելը թշնամական վերաբերմունք է: Ուստի Թուրքիան պէտք է փոխի իր կեցուածքը, Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատի:

Բայց սա չի նշանակում, որ Հայաստան եւ Թուրքիա յարաբերութիւնները պէտք է այսպիսին մնան, ո՛չ, դրանք պէտք է բնականոնանան:

Ըստ իս, նախագահի մտքում կար Արեւմուտքի հետ յարաբերութիւններ կարգաւորելու հեռանկարը: Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի յետեւում իրականում եղել են Միացեալ Նահանգներն, նրանք էին ուզում, որ կողմերի միջեւ յարաբերութիւնները հաստատուեն եւ մինչեւ հիմա, որ ինքը ձգում է, առ ոչինչ չի համարում դրանք հէնց այսօր, հէնց այս նպատակն ունեն՝ Արեւմուտքի հետ չվատացնել յարաբերութիւնները:

Այլեւս ոչ մէկը չի կարող Հայաստանին մեղադրել, որ Հայաստանը չփորձեց կարգաւորել Թուրքիայի հետ յարաբերութիւնները: Էհեռն Տէր Պետրոսեանի ժամանակ բազում փորձեր եղան, Թուրքիա Քոչարեանը եւս բազում տարբերակներ փորձեց, Սերժ Սարգսեանն էլ տեսնում էք՝ փորձում է: Ինչ ասել են՝ փորձել ենք, այլևս ոչ մէկ մեզ չի կարող մեղադրել, որ չենք փորձել:

Հ.- Պարոն Մանոյեան, երբ ՀՅԴ-ն տարիներ առաջ դուրս եկաւ իշխանական քաղաքականից, ՀՀԿ հետ տարակարծութիւններից մէկը հէնց հայ-թրքական արձանագրութիւններին էր վերաբերում: Գրեթէ 1 տարի առաջ ՀՅԴ-ն վերագործաւ իշխա-

նութիւն՝ որպէս քաղաքական գործընկեր, ինչից յետոյ ամիսներ անց Սերժ Սարգսեանը յայտարարեց հայ-թուրքական արձանագրութիւնները առ ոչինչ յայտարարելու մասին: ՀՅԴ-ն դեր ունեցե՞ր է այս որոշման կայացման մէջ:

Կ. Մ.- 2009թ.-ին մենք յայտարարեցինք, որ դուրս ենք գալիս քաղաքականից, ոչ թէ նրա համար, որ չգիտէինք, որ այս հարցում բանակցութիւններ են վարուում, այլ որովհետեւ չգիտէինք, որ ապրիլի 24-ի նախօրէին պէտք էր ներկայացուէր ճանապարհային քարտէզը: Մենք ունէինք տարակարծութիւն կառավարութեան հետ տնտեսական, ընկերային որոշ հարցերում, բայց կար նաեւ այս խնդիրը, Արցախի խնդիրը, իսկ երբ տեսանք, որ այս հարցում առանց մեզ տեղեկացնելու որոշում կայացուեց, ճիշդ էր դուրս գալը: Կարծում եմ, որ նախագահի համար սա անցանկալի չէր, որովհետեւ բանակցութիւններում նախագահը դա էլ է օգտագործել, թէ շատ մի՞ ճնշեք, ես կորցրել եմ:

Արձանագրութիւնները ստորագրելուց 1 տարի անց ՀՀԿ համագումարում նախագահը յայտարարեց, որ հիմա այլ մօտեցում ունենք, քան՝ մէկ տարի առաջ: Այն ակնկալիքը, որ կար Թուրքիայից, մէկ տարի յետոյ յօդս էր ցնդել՝ շնորհիւ Թուրքիայի: Վստահ եմ, որ մեր մօտեցումներն այս հարցում ազդել են նախագահի մտածողութեան վրայ, բայց ասել, որ միայն մենք ենք եղել այս որոշման պատճառն՝ այդպէս չէ: Նախագահը մինչեւ արձանագրութիւնների ստորագրումն էլ, երբ որոշեց այցելել սփիւռքեան կենտրոններ, ինչից յետոյ ստորագրման օրը հանդէս եկաւ ելոյթով, արդէն արտայայտել էր որոշակի փոփոխութիւն:

Նախագահը բաւական ինքնավստահ կերպով մինչեւ իր պաշտօնավարման համարեա վերջին օրը պահում է ստորագրութիւնը յետ վերցնելու գործընթացը: Նա մէկ առիթով ասաց, որ ես սկսել եմ գործընթացը, ճիշդ կը լինի, որ ես էլ այն աւարտեմ: Ամէն դէպքում, հնարաւորութիւն թողնում է միջնորդներին՝ անելիքները անել, որ չասեն, թէ ժամանակ չկար իրավիճակը կարգաւորելու, չմեղադրեն աճապարելու մէջ: Ուստի իր պաշտօնավարման մինչեւ վերջին օրը, մինչեւ լիազօրութիւնների աւարտի վերջին օրը պահում է ստորագրութիւնն այս արձանագրութիւնների տակ:

Հարցին՝ ի՞նչն է փոխուել Թուրք-գերմանական յարաբերութիւններում, ինչո՞ւ նախորդ տարի Գերմանիայի վարչապետ Անկելա Մերքելը յայտարարեց, որ Թուրքիայի նկատմամբ Գերմանիայի քաղաքականութիւնը հնարաւոր է խոտացուի, բայց օրերս Գերմանիայի արտաքին գործերի նախարարն ասաց, որ հնարաւոր ամէն բան կ'անեն Թուրք-գերմանական յարաբերութիւնների կարգաւորման համար, Կիրո Մանոյեանը պատասխանեց. «Գերմանիայի քաղաքականութիւնը Թուրքիայի նկատմամբ չի փոխուել: Պարզապէս վերանայում են եղել: Պէտք է ընդունել, որ Թուրքիան յաջողել է Եւրոպային ինչ-որ իմաստով պատանդ պահել՝ սպառնալով սիրիացի գաղթականներով: 1 տարի առաջ Թուրքիան հնարաւորութիւն էր տալիս, որ փախստականները հասնեն Եւրոպա, եւ դա ճնշում էր Եւրոպային, եւ յարաբերութիւնները վատթարացան նաեւ այս պատճառով: Վերանայել է իր կեցուածքը նաեւ Թուրքիան: Նրանք էին մեղադրական ոճով խօսում, բայց փոխեցին իրենց հետադարձութիւնը՝ հասկանալով, որ Գերմանիայի հետ չյարաբերուել չեն կարող»:

Ըստ Մանոյեանի, Եւրոպան պատանդ է Թուրքիայի ձեռքում, եւ դա որոշակի կեցուածք է թելադրում Արեւմուտքին, ամէն դէպքում, թէ՛ ԵՄ օրակարգից, թէ՛ Թուրքիայի օրակարգից հանուել է Եւրոմիութեանը Թուրքիայի անդամակցութեան խնդիրը: «Գուցէ յատուկ յարաբերութիւններ լինեն, նման կարգավիճակ լինի, բայց անդամակցութեան հարցը, եթէ ոչ առյուծապէս, գոնէ առաջիկայ 10-15 տարիների համար օրակարգից հանուած է», նշեց ՀՅԴ-ականը:

Այս ընթացքում, ըստ Կիրո Մանոյեանի, Թուրքիան դարձաւ ոչ թէ եւրոպական, այլ՝ անելի իսլամական եւ հեռացաւ եւրոհամարկուտից: «Թուրքիայի անդամակցութեան գործընթաց իրաւականօրէն կայ, բայց տէ՛ ֆաթթօ չկայ:

Կիրո Մանոյեանն ասաց, որ Թուրքիան ցանկութիւն չունի զիջումների գնալ, երկրում արտակարգ իրավիճակ է, դատարանները չեն գործում, հազարաւոր մարդիկ աշխատանքից ազատուում են, քաղաքացիներին ձերբակալում են, եւ նման պայմաններում անհնար է անդամակցել Եւրոմիութեանը:



ANI BAKERY

ԱՆԻ ՓՈՒՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապալադեան

Ուր կը գտնեք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցեք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)



Հովանավորությամբ
Քերաշնորհ Տ. Բարզէն Արք. Չարեանի
 Առաջնորդ
 Գանատայի Հայոց Թեմի

Կազմակերպությամբ
 Ազգային Առաջնորդարանի
 Հայեցի Դաստիարակության Խորհուրդին




ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ

Տեղի պիտի ունենայ
ՇԱԲԱԹ, 3 ՓԵՏՐՈՒԱՐ 2018-ին
 Առաւօտեան ժամը 11:00-15:00

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՏՕՆԻՆ



Եկէ՛ք միասնաբար երգենք, պարենք,
 ստեղծագործենք եւ ծաղկեցնենք
 հայերէնը, պատանիներուն համար
 պատրաստուած արուեստի
 ձեռային աշխատանքներով
 եւ զանազան խաղերով:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝

Ս. Նշան Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին
 ՀԱԸՄ-ի սկաւտներուն եւ մարզիկներուն
 Համազգայինի «Տաթեւ» մասնաճիւղին
 ՀՅԴ Պատանեկան Միութեան «Վարդան» եւ «Փոթորիկ» մասնաճիւղերուն
 ՀՕՄ-ի «Մեղրի» մասնաճիւղի Շաբաթօրեայ Վարժարանին

Գեմարիճի Հայ Կեդրոնէն ներս
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ



Հովանավորությամբ
 Գերաշնորհ Տ. Բաբգեն Արք. Չարեանի
 Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Առաջնորդի Ընթրիք

Ի նպաստ Ազգային Առաջնորդարանին



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ
 ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
 ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ճաշկերույթը տեղի պիտի ունենայ

ԿԻՐԱԿԻ՝ 4 ՓԵՏՐՈՒԱՐ 2018-ԻՆ
 ԵՐԵՎԱՆԻ ՃԱՄԸ 5-ԻՆ

ԿԻՐԱԿԻ՝ 11 ՓԵՏՐՈՒԱՐ 2018-ԻՆ
 ԵՐԵՎԱՆԻ ՃԱՄԸ 6-ԻՆ

ՁԵՌՆԱՐԿԻ ՀՈՎԱՆԱԻՈՐ
 ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
 ՇԱՆԹ ԵՒ ԱԼԻՆ ՂԱԶԱՐԵԱՆ

ՁԵՌՆԱՐԿԻ ՀՈՎԱՆԱԻՈՐ
 ՏԻԱՐ
 ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԹՈՐՈՍԹՈՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՍ
 45 HALLCROWN PLACE, WILLOWDALE, ON M2J 4Y4
\$100.00

ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՍ
 3401 OLIVAR ASSELIN, MONTREAL, QC H4J 1L5
\$100.00

Յաղագրությունները
 և տարբերու համար պիտի

☎ 514-856-1200

✉ pre.ary@armenianprelacy.ca

armenianprelacy.ca



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

**JAN 27
8PM**

ՀԱՄԱԳՈՍԵՒՆ
Հայ կրթական և մշակութային կենտրոն
5000 Avenue de l'Église, Laval

**ARPI
GABRIELYAN**

**ASHOT
GHAZARYAN**

**RAFAEL
YERANOSYAN**

ԵՐԳ ԿՍՅԱՍՏԱՆԻ
a musical / comedy variety show

Centre Arménie
1025 Elisabeth Blvd., Chomedey, Laval
Sylvie (514) 773-9391 | Sevan (514) 924-9248

TICKETS \$35

**Manoir
Gouin**

Residence
Certifiée

À partir de **995\$** (hors taxes)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques
dans chaque appartement

Մեկ հոս ուրախ եկ
Պրն. Իրենան

1er mois gratuit pour tout bail signé avant le 28 février 2018

Պատրաստ քեռի 4'000հաւայ
յետ շահագուստեան ՏՈՒՆԵՆ ԱԵՐԱ:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

Դիմաւորելով 100-ամեակը. Անցեալի Ճանաչումը Ներկայի Քաղաքականութիւնն Է

Ժողովուրդ մը, որ կ'անգիտանայ իր պատմութիւնը եւ կը խորթանայ իր լեզուին, կը նմանի անդեկ նաւու մը, որ կը տարուի հոն, ուր հով եւ հոսանք գինք քշեն: Պատմութիւնը սոսկ դիպուածներու համար, ան ազգի գոյութեան եւ շարունակութեան վրայ կ'ազդէ, անցեալը կը բերէ ներկային: Այս գիտակցութեան բացակայութեան ազգը կը դառնայ ամբողջ:

Թեւեակոխած ենք նոր տարի մը: Վերանկախացած հայրենիքի հանրապետութիւնը եւ սփիւռք(ներ)ը պիտի նշեն Հայաստանի անդրանիկ հանրապետութեան 100-ամեակը: Ոմանք նոր գիւտ ընողի պէս պիտի անդրադառնան պատմական այդ իրադարձութեան, ուրիշներ համաժողովներ պիտի կազմակերպեն: Հայրենի պետութիւնը այս առիթով մշակած է ընդարձակ ծրագիր՝ ոչ միայն երեւանի համար:

Սփիւռք(ներ)ը, ի հարկէ, գէթ անոր մէկ հատուածը, դար մը ամբողջ, վառ պահելէ ետք անդրանիկ անկախ հանրապետութեան յիշողութիւնը, իր կարգին, մոլորակի մեծ կամ փոքր քաղաքներուն մէջ պիտի յիշէ եւ յիշեցնէ պատմական կարեւոր երեւոյթը եւ ժամանակաշրջանը, երազը՝ ընդգէմ ուրացումներու, պայքարներու, անհասկացողութիւններու: Երազ, որ գանգուածներու ստուար տոկոսին համար դարձած է թուական մը՝ ՄԱՅԻՍ 28: Ան քիչ պարագաներու կ'առաջնորդէ ներկային մէջ ստանձնուելիք յանձնառութեան:

Այսինքն՝ պատմութեան մէջ թուական մը: Բառեր, խանդավառութիւն, նաեւ յուզումի միզամած մը կայ:

Գիրքերու մէջ է՞ջ մը: Կամ՝ թանգարան այցելութիւն:

Ի՞նչ է այսօր գանգուածներուն համար պատմութեան այդ իրադարձութեան ընթացքը: Բանք-բիւնքի անսեթեւեթ գիտակցութիւնը՝ որպէս յանձնառութեան առաջնորդող կեանքի իմաստ:

Եթէ այդ յանձնառութիւնը չըլլայ, պատմութիւնը կը դառնայ ճանճորթի դէմ հեռատեսիլի պատկեր:

Յանձնառութիւն. մոգական բառ: Որ չի գնուիր: Փոխանորդութիւն է՞ ընդունիր:

Նոյնիսկ եթէ խորհրդային տասնամեակներու ընթացքին անկախութեան գաղափարը համարուեցաւ քաղաքականութեան խորթ գաւազ: Հայաստան եւ սփիւռք(ներ), պատմութիւն-ժամանակ յառաջընթացը վճռեց: Սակայն այդ վճիռը ազգը չհասցուց իսկական ազգային համապարփակ յանձնառութեան, զգացականութեան՝ յուշ-յիշատակի եւ նիւթապաշտական ընդարմացումը յաղթահարելով, ինչ որ կը բացատրէ ազէտարտագաղթը եւ գանգուածային պատասխանատուութեան գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ հայրենադարձութիւնը, որ կը նշանակէ իսկական հայրենատիրութիւն:

Հայրենատիրութիւն, որ տարբեր որակ է, պէտք է միշտ կրկնել, բարեսիրութեան, զբօսաշրջութեան եւ քարոզչական աղմուկէ: Հայրենատիրութիւնը կը չափուի հայրենադարձութեան թիւերով:

Անդրանիկ անկախ հանրապետութեան 100-ամեակ ՊԻՏԻ ՏՕՆՈՒԻ, ի՞նչ ըսելու եւ մանաւանդ ի՞նչ ընելու համար: Եթէ 10, 20, 50 կամ 99-ամեակներու յաջորդ օրերու նոյնութիւնը պիտի փռենք թերթերու մէջ կամ հեռատեսիլի պատասխան վրայ, ոչինչ կերտած պիտի ըլլանք:

Այլ խօսքով, 100-ամեակի սօնախմբութիւնները պիտի ըլլա՞ն ազգաշէն վերականգնումի նախատօնակ, թէ՞

պարզապէս գուարճացնող եւ ոչինչ արձանագրող հրավառութիւն:

Անցեալի, անմիջական անցեալի եւ ներկայի տուեալներու անշարժ հաշուեկշիռը պէտք է ընել՝ միաժամանակ պատասխանելով կարգ մը հարցումներու. ի՞նչ կրնայինք ընել եւ չըրինք, ի՞նչ կրնանք ընել եւ չենք ընել, մանաւանդ՝ ինչո՞ւ:

Պէտք է ընդունել մեր ԱՆՅԵԱԱ-ը, ընդունել ճիշդն ու սխալը, յաջողութիւնը եւ ճախողութիւնը, եւ որդեգրուել իսկական նոր փուլի մը ուղղութեան մէջ: Ինչ կը վերաբերի անմիջական ներկային, որ վաղուան գրաւականն է, անհրաժեշտ է նախաձեռնել թերիներու եւ թերացումներու սրբաբոլորութեան: Այս ընելու համար ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿ-ՇԻՌ մը պէտք է ընել, Հայաստան, նաեւ՝ սփիւռք(ներ):

Ով կ'ըսէ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ, պիտի ըսէ նաեւ՝ ՀԱՇՈՒԵՔՆ ՆՈՒԹԻՒՆ, audit, Հայաստան կ'ըսեն՝ աուդիտ, որ ընթացիկ հաշուապահութեան տարբեր է: Այս աուդիտը հայրենիքը հզօրացման առաջնորդող եւ ժողովուրդի վստահութիւնը վերականգնող եւ նոր ժամանակները սկսող մեծագոյն որոշում-յանձնառութիւնը կ'ըլլայ:

Ոչ շատ հեռու անցեալին, վերանկախացած Հայաստանի պատասխանատու մը կ'ըսէր, որ խորհրդային շրջանի ոստիկանական եւ այլ արխիւները կարելի չէր բանալ, քանի որ Հայաստան փոքրիկ երկիր էր, մարդիկ զիրար կը ճանչնային, եւ վրէժխնդրական լայնածիր դէպքեր կրնային պատահիլ: Արդեօ՞ք նոյն մօտեցումը պէտք է ունենալ վերջին երեսնամեակին համար ալ: Բայց ինչպէ՞ս կը վերականգնին անտեսութիւնը եւ վստահութիւնը, եթէ ազգէն կողոպտուածը չվերադարձուի ազգին եւ չյաղթահարուի աւեր գործած եւ գործող մեծածաւալ կամ փոքրածաւալ փտածութիւնը՝ կողոպտիչան:

Աւելի պարզ խօսելով՝ պէտք է հաշուեքննութիւնը ընել, աուտիդը, անաշխատ հին եւ նոր հարստացումներու: Անցեալին վարչապետ մը խոստացաւ, յաճար կը յիշեն, որ աուտիդ կ'անենք... Պատմութիւնը երախտիքով պիտի յիշէ բոլոր անոնք, որոնք այդ աուտիդը անելու հերոսութիւնը կ'ունենան: Յրանստայն մեծ դրամագլուխի տէրեր, որոնք ապահով ըլլալու համար մեծ գումարներ պահ գրած էին երկրէն դուրս գտնուող օտար դրամատուներու մէջ, յայտարարեցին իրենց հարստութիւնը, երկիր բերին իրենց այդ հարստութիւնը՝ իշխանութեան ընդունելի համարուած որոշումներու որպէս արդիւնք: Ինչո՞ւ Հայաստանի մէջ ալ իշխանութիւնը նման նախաձեռնութիւն պիտի չունենայ:

Ինչպէ՞ս պիտի սրբաբոլորին խորհրդային համակարգի փլուզման յաջորդող շրջանին այդքան արագութեամբ դիզուած անաշխատ հարստացումները, որոնք եղած են եւ կ'ըլլան ի հեճուկս գանգուածին եւ ի նպաստ սակաւապետութեան, օլիկարխիային:

Արթըր Միլլըրի «Սալեմի վճուկները» բեմադրելու կոչ չէ սափա, այլ ցանկութիւն՝ յաւելեալ արդարութեան հասնելու, որ նախապայմանն է այսօրուան վստահութեան եւ վաղուան վերականգնումի:

Որպէսզի այդ վերականգնումը ըլլայ համազգային տարողութեամբ, հարկ է դառնալ դէպի ժողովուրդը, որպէսզի ան ըլլայ տէր եւ ծառայ հայրենիքին եւ անկախ պետութեան: Անաշխատ հարստացումները յուեզոյն ազգակներն են վստահութեան խախտումի: Աւելի պարզ-

ՄԱՆՐԱՆԿԱՐ Հայտումիս գնած պահուս

—Քանի այդ կողմը կ'երթաս, մէկ անգամէն լահմաճիւն ալ բեր,— հրահանգելու պէս խնդրեց, կամ խնդրելու պէս հրահանգեց կինս եւ աւելցուց,— ըսէ՛ երկու տուփի մէջ թող դնէ, վեց-վեց, աւելի դիւրին կ'ըլլայ մէկ մասը սառեցնելու համար:

Շատերու պէս ես ալ լահմաճիւն ուտել կը սիրեմ, բայց այդ բա՛ւը չեմ սիրեր, քանի որ գրեթէ անփոփոխ փոխառութիւն մըն է արարեքէնէն: Հիմա Հայաստան զայն աղաւաղելով հայացուցեր են՝ «լահմաճո»-ի վերածեր, սակայն իմ նախընտրածս «հայտումիս»-ն է, բարեհունչ թարգմանութիւնը նոյնին՝ շրջելով բարդ բառի երկու բաղադրիչներու տեղերը, «հայս»-ը (խմորը՝ «ածիւն»-ը) դնելով «միս»-էն («լահմա»-էն) առաջ, ինչ որ աւելի տրամաբանական ալ է: Բառը, կ'ըսէ երբեմնի ուսուցիչս ու մնալուն բարեկամս՝ Շահանը, ատենին կերտած են մեր Գահիրէի Գալուստեան ազգային վարժարանի աշակերտները, այն ատենին, երբ հայերէն նոր բառեր կերտելու կիրքն ու ցնծութիւնը կը ստեղծուէին հայ դպրոցի աշակերտներուն մէջ...

Այս փոստան տէրը գիտէ այդ բառը, ինձմէ սորված է, եւ երբ կ'ապարեմ՝ զարմացկոտ աչքերով չի նայիր երեսիս, թէ՛ ի՞նչ ըսել կ'ուզեմ:

—Բարի լոյս, Վարդգէս... Ըսելով կը մտնեմ իր քով եւ հայտումիս կը խնդրեմ, 12 հատ, երկու վեցնոց տուփի մէջ, ինչպէս որ պատուիրուած է:

Միայն հայտումիս չէ, որ կը ծախուի այստեղ. ան ունի աղի եւ քաղցր ալյուղան խմորեղէններ՝ բոլորակաձեւ, եռանկիւն, քառանկիւն, ցպիկներ՝ ուղիղ ու ոլորուած, տակաւին ի՞նչ-ի՞նչ ախորժաբեր բաներ, որոնք փորձութեան կը մատնեն յաճախորդը, որ զգոյշ պէտք է ըլլայ՝ մանաւանդ եթէ գեղագիտական թէ՛ առողջապահական խնդիրներ ունի...

Վարդգէսին երթալս, սակայն, հետաքրքրական է ոչ թէ այս համեղ ուտեստեղէնին համար, այլ նաեւ այն մի քանի վայրկեանի խօսակցութեան, որ ապապրանքս պատրաստած ատեն կ'ունենայ ինձի հետ: Մինչ մէկ կողմէն ինք խմորեղէնները կը հանէ ցուցադարաններէն, տուփերուն կամ ծրարներուն մէջ կը գետեղէ, միւս կողմէն մենք կը գրուցենք: Ի՞նչ կը գրուցենք... ամեն ինչ որ կրնայ հետաքրքրել երկու կուսակցականներ, թող թէ տարբեր կուսակցութիւններէ՛ ազգային հարցեր, համազգային հարցեր եւ նման բաներ:

Այս անգամ սակայն մեր զրոյցը այլ ուղղութեամբ գնաց: Անզգալաբար:

—Որքա՛ն փոխուեցաւ շրջապատդ տարիներու ընթացքին,— դիտել տուի: —Ատեն մը Դալարինան կար այստեղ, ուրկէ ես ալ կու գայի նպարեղէնս, բանջարեղէնս գնելու:

—Այստեղ չէր, քովի խանութն էր,— սրբազրեց Վարդգէս: Հոս Փիլոն կար, կը յիշե՞ս:

—Ի հարկէ կը յիշեմ:

—Նայէ՛, հիմա ան փողոցին դիմացի կողմը անցած է:

—Տեղը մեծցուցեր ալ է: Հոն ալ կարծեմ էտիին լուսանկարչատունն էր: Անոր ալ այցելած եմ:

—Ան ալ ուրիշ վայր մը գնաց, կարծեմ մեծ շուկայի մը մէջ տեղ գտաւ:

—Կը տեսնեմ թոփալեաններուն նպարատունը դեռ կայ դիմացը:

—Իրենք չեն այլեւս, ծախեցին:

—Հայերէն գիրք ալ կը վաճառէին, քիչերէն էին, թերեւս միակը, որ մարմնական սնունդին հետ հոգեկան սնունդ ալ կը մատակարարէին... Բայց կը տեսնեմ, որ Սիրանը դեռ բաց է, Ղազարը դեռ հո՞ն է:

—Վարսավիրանոցը բաց է, այո, Ղազարն ալ կ'երեւի, բայց այլեւս աղջիկը՝ Սիրանը ինք կը դարձնէ: Շատ հայեր կու գան իրենց մօտ, լաւ անուն ունին:

—Իսկ ի՞նչ եղաւ Շանթին փորագրական աշխատանոցը, որ քեզմէ քիչ մը աւելի վար էր:

—Տեղեակ չեմ, բայց ան ալ տարիքը առաւ:

—Այո, շատ բան փոխուեցաւ մեր շուրջ:

—Ընկե՛ր Վրէժ, բան նոյնը չի՛ մնար, ամեն բան կը փոխուի, միայն թէ դէպի լաւ փոխուի: Այս քաղաքն ալ նոյնը չէ այլեւս, տարբեր տեղ մըն է դարձեր:

—Շատ չդժգոհինք, Վարդգէ՛ս, տարբեր ըլլալով հանդերձ, ուրիշ տեղերէ լաւ է. եթէ այլուր գաղթած ըլլայինք, չեմ գիտեր ի՞նչ վիճակներու մատնուած պիտի ըլլայինք այսօր:

—Ըսելիք չունիմ, նորէն փառք տանք Աստուծոյ: Դժբախտութիւնը այն է, որ մեր երկիրը չենք, Հայաստան չենք, մնացեալը երկրորդական է:

—Այդ էջը մի՛ բանար, սիրելիս. կամովին Հայաստանէն դուրս մնացած ըլլալու մեղքի զգացումը մեզի պիտի ընկերանայ մինչեւ գերեզման:

—Այդպէս մի՛ ըսեր, ընկե՛ր Վրէժ: Դուրսն ենք եւ դուրսը չենք. պորտակապը չէ՛ կտրուած...

—Ատով ալ պիտի մխիթարուինք կ'երեւի:

—Ահա հայտումիսդ: Բարի ախորժակ: Տիկինին բարեւ ըրէ:

—Ցտեսութիւն, ընկե՛ր Վարդգէս...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

անկախ Հայաստանի պաշտպանութեան համար ժողովուրդի նեցուկ պէտք է, եւ այդ հնարաւոր կը դառնայ, երբ գանգուածը չի դառնանար՝ ի տես անհաւասարութիւններու, չարաշահումներու, կողոպտութի, փտածութեան:

Ազգային բարձրամակարդակ գիտակցութեան մը ծնունդ կու տա՞ն այս հարիւրամեակի տօնախմբութիւնները, որպէսզի երեւանցին, գիւմրեցին, վարդեհիսցին, բայց նաեւ հեռուի եւ մօտի հայերը արդարութեան արեւին տակ զգան իրենք գիրենք, երբ հայրենիքի մէջ են կամ անկէ դուրս:

Ժամանակակիցներս, Հայաստան եւ սփիւռք(ներ), առարկայականութեամբ, պարկեշտութեամբ, իրաւ հայրենասիրութեամբ, բովանդակալից հայրենատիրութեամբ պէտք է որ առաջնորդուինք, իսկ

այդ ընելու համար անհրաժեշտ են արդարութիւնը եւ սրբաբոլորութիւնները, հետեւաբար նաեւ՝ խոստացուած եւ երբեք իրականացած հաշուեքննութիւն-աուտիդը:

Անկախութեան հարիւրամեակի տօնախմբութիւնները կը վերածուի՞ն ազգային վերականգնումի անսեթեւեթ յանձնառութեան: Այդ ալ ցոյց պիտի տայ պատմութիւնը, անով պիտի դատուինք վաղուան պատմութեան կողմէ:

Ինչպէ՞ս պիտի ծրագրուի եւ իրականացուի, մինչեւ 101-ամեակ, սփիւռք(ներ)ի քանի մը միլիոնէն գէթ 100.000-ի վերադարձը հայրենիք՝ անկախութեան տիրութիւն ընող ժողովուրդի որպէս անշարժ վահան:

Յ. ՊԱԼԵԱՆ

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - Բ.

**Գլուխ Առաջին
Ընդհանուր Ակնարկ Մը**

1
Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ պայթած կռիււորքան ալ համաշխարհային պատերազմը մէկ դրուագը կը ներկայացնէր, այսու հանդերձ միջազգային լարուած քաղաքական կեանքին մէջ ծանրակշիռ հետեւանքներ չունեցաւ:

Միջազգային անցուղարձերու ծանրութեան կեդրոնը Եւրոպայի եւ Միջերկրականի մէջ կը գտնուէր, մինչդեռ Ռուսական գործողութիւնները մեծ մասամբ կը սահմանափակուէին Կովկասի ճակատին վրայ: Ռուսաստանը Պալքանեան թերակղզիով կամ Սեւ Մովու վրայով դէպի Թուրքիոյ կողմը, կամ դէպի Կ. Պոլսը չկրցաւ յառաջանալ: Այսպիսով Թուրքերն ու ռուսերը գոտեմարտի բռնուեցան Հայաստանի բարձրաւանդակին վրայ եւ մասամբ ալ ընդարձակուեցան մինչեւ Հարաւային սահմանները:

Ռուս-Թրքական պատերազմն իր միջազգային լայն բնոյթով քննութեան նիւթ չենք կրնար դարցնել այս աշխատութեան մէջ, բայց այդ պատերազմի հետեւանքները ծանր անդրադարձում մը ունեցան Կովկասի եւ մասնաւորապէս Հայաստանի վրայ: Հայութեան ներքին պիկնոտութիւնը պատկերացնելու համար, անհրաժեշտ է համառօտ ակնարկ մը նետել պատերազմի առաջին օրերուն տեղի ունեցող քաղաքական եւ հոգեբանական վիճակին վրայ, որ շատ բնորոշիչ է եւ անմիջական առնչութիւն ունի հայ ժողովրդի երկու հատուածներու ազգային հասարակական քայլերուն հետ:

Համաշխարհային պատերազմը պայթած էր: Մեծ պետութիւնները, բացի Իտալիայէն նետուած էին կռուի կրկէսը: Թուրքիա տակաւին կը դեղեւէր Ռուսաստանի դէմ պատերազմ յայտարարելու: Սակայն պատերազմի ընթացքն արագ թափով մը կը զարգանար եւ կը պայթեցնէր իր շուրջ գտնուող պատուարները, ստիպելով բոլորին այս կամ այն կողմն անցնելու:

Ռուսաստան իր գլխաւոր ուշադրութիւնը կեդրոնացած էր Աւստրո-Գերմանական ճակատներու վրայ. սակայն նոյնքան տենդագին պատրաստութիւններ կը տեսնէր նաեւ Կովկասեան ճակատի համար: Թուրքիան անպատրաստ էր տակաւին պատերազմի բեմը նետուելու: Այս կացութիւնը երկու կողմին ալ ձեռնուտ էր:

Յուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսները ընդհանուր զօրահաւաքի, ուժերու կեդրոնացման եւ դիրքերը ճշդող ամիսներ եղան: Ռուսաստան ու Թուրքիան տենդագին լարուածութեամբ կը պատրաստուէին:

2.

Այդ ժամանակաշրջանին էր, որ գումարուեցաւ Ղ.Յ.Դաշնակցութեան 8-րդ Ընդհանուր Ժողովը Էրզրումի մէջ: Համաշխարհային այդ ահռելի պատերազմի առաջին օրերուն եղան պետութիւններ, որ հոսանքէ տարուած խրախճանք մը ապրեցան: Սակայն անմիջապէս անդրադարձան գիտակցելու տեղի ունեցած դէպքերու ծանրութիւնը եւ որոնելու բարեկամներ ու դաշնակիցներ, յաջող կերպով տանելու համար պայքարը յարձակողական թշնամուն դէմ:

Պէտք է խոստովանել սակայն, որ բացի պատերազմի հեղինակ խոշոր քանի մը պետութիւններէն, մնացածները, առաջին օրերուն, անգիտակ էին չափելու պատերազմի տարողութիւնը, տեւողութիւնը եւ հաւանական արդիւնքները: Ոմանք հարկադրուած, ոմանք ալ անմիջական հաշիւներէ տարուած՝ կը դասաւորէին իրենց ուժերը այս կամ այն կողմը:

Մենք հայերս աւելի անորոշ վիճակ մ'ունէինք: Մեզի համար Թուրքը վտանգաւոր էր. այդ գիտենք: Միւս կողմէ Ռուսի բարեկամութեան ալ չէինք վստահեր, թէնք գիտէինք որ չպիտի կոտորուինք: Մենք երկու սուրի մէջ ինկած էինք: Եթէ այդ բարդ իրականութեան վրայ աւելցնենք որ մենք հայերս կորուած էինք դիւանագիտական աշխարհէն, պետութիւն չունէինք, մեր գիտեալ ուժերը չնչին էին, եւ բացի կուսակցական հաւաքականութենէ, ազգային որեւէ հաւաքականութիւն չունէինք, պարզ է ուրեմն որ մենք պիտի ըլլայինք ամենէն յետինը գրութիւնը ըմբռնելու եւ մեր ուղեգիծը որոշելու՝ մեր շրջապատին մէջ տեղի ունեցող մեծ դէպքերու մէջ:

Հայ ժողովրդէն կարելի չէր եւ իրաւացի ալ չէր սպասել որ գերբնական հասողութիւն մ'ունենայ միջազգային դիւանագիտական աշխարհն ըմբռնելու եւ այդ ընդհանուր եւ ահռելի քաօսին մէջ ճշգրտու իր առնելիք քայլերը:

Հայ ժողովուրդը կը տեսնէր կարգ մը պարզ երե-

ւոյթներ որոնք հարկադրաբար կ'որոշէին իրեն բռնելիք դիրքը: Հայերը կը գիտակցէին, որ Ռուսաստանը կ'ուզէ արշաւել դէպի հարաւ, դէպի տաք ջրեր, ու հետեւաբար՝ կ'ուզէ ունենալ Հայաստանը հայերով, կամ՝ առանց հայերու: Իսկ Թուրքը դարաւոր թշնամի էր Ռուսին, ինչպէս նաեւ հայուն: Թուրքիա կ'ատէր Ռուսաստանը, որ կու գար անդամալուծել զինք եւ թոյլ չէր տար ընդարձակուելու դէպի կովկասեան Հայաստանը, դէպի Ադրբէյջանը եւ աւելի հեռու՝ դէպի Թուրք-թաթարական բնագաւառները: Հայն ալ իր կարգին կը բռնէր ամբողջ ճանապարհը Թուրք ցեղի ընդհանուր միացման. կը ձգտէր իր ինքնավարութեան, եւ շունչ կ'առնէր՝ երբ հարուածները կը տկարացնէին Թուրքին: Այդպիսով, մեր աշխարհաբանական դիրքի, ինչպէս նաեւ երկու հատուածներէ ազգային ամբողջութիւն մը կազմելու մեր ձգտումի պատճառով, մենք կը դասաւորուէինք Ռուսաստանի կողքին, որպէս ընդհանուր թշնամի Թուրքին:

Թրքական ազգային ծրագիրները օսմանեան բանակի աչքերը կ'ուզէին դէպի Բագու-Բուխարախաւ. իսկ ռուսական բանակը իրեն առաջնորդ ունէր Մեծն Պետրոսի կտակը- իջնել Միջերկրական ծով եւ Հնդկաց ովկիանոսը: Մենք հայերս ինկած այդ երկու խոշոր կրունկներու տակ, պէտք է որոշէինք մեր դիրքը:

Հայ ազգ ըսելով ի՞նչ պէտք է հասկնանք այս պարագային: Աշխարհքի չորս կողմ ցրուած բոլոր հայերը միասին առած՝ կ'անուանենք հայ ժողովուրդ կամ հայ ազգ: Բայց այդ ծանրակշիռ օրերուն շեշտակի կերպով տրուած հարցերուն պիտի պատասխանէր հայ ժողովրդի մէկ մասը, յանուն հայ ազգին: Հայ ազգի այդ մասը կեդրոնացած էր Կովկասի եւ Տաճկահայաստանի մէջ: Արարատի երկու կողմերու վրայ տարածուած հայութիւնն էր որ հայ ազգը կը ներկայացնէր եւ անոր ուղղած հարուածներն իր կողմէն կ'ընդունէր: Մնացած հայութիւնը, որպէս ոչ անմիջական ենթակայի, կարող էր խօսիլ, վիճիլ, ոգեւորուիլ եւ լայն հաշիւներ ընել, բայց անպատասխանատու էր եւ իր մտածումներն ու ցանկութիւնները չէին համապատասխաներ ռուս-թրքական ճակատի երկու կողմը տարածուած ժողովրդի ապրումներուն:

Բովանդակ հայ ժողովուրդը ներկայացնող մէկ ամբողջական հայ ազգային մարմին մը չունէինք:

Հայոց Կաթողիկոսութիւնը իր պատեանի մէջ քաշուած, որոշ մտածում եւ քաղաքական ծրագիր չէր հետապնդեր եւ ընդհանուր առմամբ ենթակայ էր ռուսական իրականութեան: Մնացած հասարակական հաստատութիւնները Կովկասի մէջ քաղաքական բովանդակութիւն չունէին: Հայոց պատրիարքարանը Կ. Պոլսոյ մէջ ենթակայ էր թրքական ազդեցութեան, որու դիւանագիտական առաքինութիւնը կը կայանար այն բանի մէջ, որ ապաւինէր «բարեխնամ» կառավարութեան, խոստանալով հաւատարիմ նպատակութիւն: Մնացած ցիրուցան հաստատութիւնները, նման ծանրակշիռ պարագաներուն, աւելի քան տկար կը ներկայանային, նոյնիսկ իրենց տեղական խնդիրներու մէջ: Կովկասի մէջ հիմնուած Ազգային Բիւրօն թէնք սահմանափակ, բայց քաղաքական որոշ հանգամանք ունէր եւ առաւելապէս Դաշնակցութեան ազդեցութեան տակն էր:

Ղ.Յ.Դաշնակցութիւնը միակ քաղաքական կուսակցութիւնն էր, որ ոչ միայն ցիրուցան ամբողջ հայութեան մէջ ունէր իր կազմակերպական ցանցը, այլ Տաճկահայաստանի եւ ռուսական Հայաստանի մէջ կը ներկայացնէր միակ ընդհանուր բնոյթ կրող կազմակերպուած ազգային քաղաքական ուժը: Ահա, այդ օրերուն, Ղ.Յ.Դեան 8-րդ Ընդհ. Ժողովը կը գումարուէր Տաճկահայաստանի գլխաւոր քաղաքին, Էրզրումի մէջ, ուր հաւաքուած էին Հայկական նահանգներէն եւ Կովկասէն կուսակցութեան ներկայացուցիչները:

Դաշնակցութեան հերթական Ընդհանուր Ժողովը տեղի պիտի ունենար արդէն Էրզրումի մէջ: Իսկ պատերազմի պարագան աւելի խոշոր կարեւորութիւն մը տուաւ այդ ժողովին, որ մեր ժողովրդի եւ հայրենիքի բացառիկ դրութեան պատճառով, անպատրաստ էր, որոշակի լուծում մը տալու իր առջեւ ցցուած հրատապ խնդիրներուն:

Ղ.Յ.Դաշնակցութիւնը ռուսական օրիանթախօն չունէր: Հայ ժողովրդի եւ մասնաւորաբար Դաշնակցութեան օրիանթախօնը կ'որոշուէր միջանկատի առնելով Թուրքիան: Դաշնակցութիւնն ու հայ ժողովուրդը կը հակուէին այն ուժերու կողմը, որոնք ակնյայտի ձգտումն ունէին վնասելու Թուրքին եւ քայքայելու անոր պետութիւնը: Ռուսաստանը 80-ական թուականներուն յայտ բերած էր այնպիսի ուղղութիւն մը, որ բացորոշ կերպով ուղղուած էր հայերու դէմ եւ ժամա-



նակաւոր հովանաւորութիւն մըն էր Թուրքիոյ: Հայ հասարակական կեանքի զարգացման ընթացքին, մենք կը տեսնենք թէ ի՞նչպէս աստիճանաբար Դաշնակցութեան յեղափոխական ուժերը կը լարուին նաեւ ռուսական բռնակալ իշխանութեան դէմ: Ռուսական առաջին յեղափոխութեան պարզեւած ազատութեան ալիքները տեղի տուած էին եւ այդ գրութեան յաջորդած էր նոր դիւանագիտական մը, աւելի ու աւելի սեղմուած շրջանակի մը մէջ առնելով Ռուսիոյ հասարակական կեանքը:

Մինչդեռ Թուրքիոյ հռչակած Սահմանադրութեան շնորհիւ, ազատ զարգացման հնարաւորութիւններ տեղի ունեցան էին Թուրքիոյ մէջ: Հայկական կեանքի ձեւակերպման կարելիութիւնները սահմանափակուած էին Թուրքիոյ ներքը, եւ Դաշնակցութեան աշխատանքները ստացած էին համապատասխան բնոյթ: Այսպիսով ռուսական օրիանթախօնը մէկ կողմ թողուած էր:

Սակայն Բալկանեան պատերազմի հետեւանքները խիստ արագ անդրադարձում մը ունեցան հայկական հարցի վրայ: Միջազգային կացութիւնը, նոր հունի մը մէջ կը դնէր Հայկական Նահանգներու վիճակը, ստեղծելով երկու խոշոր նահանգապետութիւններ, որոնց գլուխ կը նշանակուէին եւրոպացի երկու մարզպաններ, տեղական շարք մը ինքնավարութիւններով: Դաշնակցութիւնը եւ հայկական հասարակական նշանակութիւն ունեցող հաստատութիւնները, ինչպիսին են Կաթողիկոսարանը, Ազգային Բիւրօն եւ Պոլսոյ Պատրիարքարանը տեսնելով որ սահմանադրական Թուրքիան ալ սկսած էր բռնել Համիտի հայաջինջ ուղին, երես կը դարձնէին անկէ եւ հայկական խնդրի մասնակի կարգադրութիւնը կը վստահէին մեծ պետութիւններու:

Դաշնակցութիւնը մինչեւ այդ թուականը, ակնյայտին հակա-ռուսական պրօպագանդա մղած էր եւ կրցած էր որոշ չափով բեկուտ առաւելացնել այդ անհուն հաւատարի մէջ, որ տաճկահայ հասարակութիւնն ունէր քրիստոնեայ Ռուսաստանի վրայ: Դէպքերը, մեզ հանեցին այդ հունէն եւ դրին դէմ դիմաց Թուրքին: Անյայտ ու լարուած հակամարտութիւնը կը դառնար շեշտուած ու հրապարակային: Անջրպետը կը բացուէր հայուն եւ Թուրքին միջեւ, ճիշդ հինին պէս:

Հայերը ճիշդ ճանապարհի վրայ էին եւ կրցած էին յաջողիլ հայկական նահանգներու համար բաւական լայն ինքնավարութիւն մը ձեռք բերել: Եթէ համաշխարհային պատերազմը չսկսէր, կասկածէ դուրս է որ հայկական կեանքը կը մտնէր նոր փուլի մը մէջ, որ զինք շատ արագօրէն պիտի առաջնորդէր դէպի լաւագոյն վերածնունդ մը: Պատերազմը այդ հաշիւները հիմնապէս խառնեց: Իսկ պատերազմի նախատեսութիւնը, իմ կարծիքով, հայ ժողովրդի հաստատութեան վեր էր:

Համաշխարհային պատերազմի պայթումով Թուրքիան նկատի առնելիք ուժ մը կը դառնար: Միւս կողմէ, մեծ պետութիւններու պատերազմի մէջ միւրճուելը, ամբողջովին ազատ կը ձգէր Թուրքիոյ ձեռքերը: Թուրքիան աւելի անձնավստահ, քիչ մը իր մէջ կը շտկէր Բալկանեան պատերազմի ճնշող մթնոլորտէն: Խորամանկ սպասումով մը իր դիրքը կ'ամրացնէր որեւէ կողմ բռնելէ առաջ: Թուրքը դեկավար տարրերը իրենց բռնելիք դիրքերը որոշած պահուն, կը հարկադրէին որ հայերն ալ իրենց դիրքը որոշեն: Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող հասարակական հաստատութիւնները, Պատրիարքարանէն մինչեւ յետին գաւառի առաջնորդարանները դիւրին խոնարհուողներ էին եւ շօշափելի ուժ մը չէին ներկայացնէր: Կը մնար Ղ.Յ.Դաշնակցութիւնը: Թուրքերը իրենց պետական ուժեղ կազմակերպութեան (Իթիհաստի) միջոցաւ ներկայացան Դաշնակցութեան, Էրզրումի 8-րդ Ընդհանուր Ժողովին:

Կարօ Սասունի

ՈՒՍՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

ԴԵՊԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ

1
Մինչեւ 1914, երբ պիտի հասնէր տառապանքներուն գագաթնակէտը⁶⁶⁵, Սահակ Կաթողիկոս փութաձանորէն «իր տառապեալ հօտին պէտքերը հոգալու, հայոց վերագրուած գրպարտութիւնները հերքելու եւ մինչեւ Կայսերական գահը բողոքներ ուղղելու, եւ արկածեալ տեղեր այցելելու» մէջ էր եղած⁶⁶⁶: Նաեւ թէ՛ «համակրական զգացումներ» հրաւիրած էր վրան⁶⁶⁷:

Այն «համակրական զգացումներ»էն ամենէն յուզիչը Ջապէլ Եսայեանին է: Եսայեան իր մէկ նամակին մէջ, յիշելով Կաթողիկոսին հետ իր հանդիպումը, այսպէս է ըսած. «տարօրինակ, աննկարագրելի ազդեցութիւն ըրաւ իմ վրաս Կաթողիկոսը. կարծես պատմութեանէն իջած դէմք մըն է. մեծ հաճոյքով զինք Վեհափառ կը կոչեմ եւ առաջին անգամ է, որ կեանքին մէջ հպատակութեան միտումներ կը գգամ. ինծի կը թուի, որ մեր պատմութեան մեծ դէմքերէն մէկն է, որ վերագրած կեանքի՝ Կիլիկիոյ աւերակներուն մէջ կը թափառի»⁶⁶⁸:

Աղէտէն ետք, Կիլիկիան «անհաց, անյոյս եւ հոգեւորապէս գրեթէ անմխիթար» կացութեան մատնուած էր⁶⁶⁹:

Լուրով մը «Տաճար» շաբաթաթերթը հետեւեալով փոխանցած է. «Կիլիկիոյ զանազան կողմերէն հասած նամակներ շատ տխուր գոյներով կը նկարագրեն տեղացիներու ոչ միայն նրկապէս, այլև հոգեւորապէս ու բարոյապէս լքեալ վիճակը: Հարիւրաւոր տնուոր բնակչութեամբ գիւղեր ու քաղաքներ գուրկ կը մնան հոգեւոր հովիւէ, մինչ բաթրաններ եւ միսիոնարներ եռանդուն գործունէութիւն ցոյց կու տան (...) Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կամ Առաջնորդութեանց ջանքերուն հակառակ, կարելի չէ եղած գոհացում տալ այս անհրաժեշտ պէտքին, եւ ժողովուրդին ուղղուած սրտառուչ կոչերն ալ անպատասխանի մնացած են»⁶⁷⁰:

Կաթողիկոսը յաճախակի աղերսներով դիմած էր համայն հայութեան, եւ յիշեցուցած, թէ «ազգը պէտք ունէր հացի, դպրոցի եւ եկեղեցիի»⁶⁷¹:

Նախքան Աղէտը համատարած էր աղքատութիւնը. հազիւ հանապազօրեայ հաց մըն էր մեծամասնութեան կերածը: Աղէտէն ետք՝ ժամանակ մը սովը: Ապա հետզհետէ ու գրեթէ ինքնաբերաբար թշուառօրէն պիտի գոհանար ժողովուրդը, մինչեւ որ հինգերորդ տարին՝ կեանքը հասնէր «կանոնաւոր ընթացք»ի⁶⁷²: Այսինքն՝ մնացորդ որբերը մեծնային, այրիները իրենց գլխուն ճարը գտնէին, հարուածին ծանրութեանէն ինկած կիլիկեցիներ վերականգնէր, վնասները մասամբ դարմանուէին, աւերակ տուններ վերաշինուէին:

Դպրոցի խնդիրը: Կաթողիկոսը իր ծանրածանր պաշտօնը ստանձնած օրէն «սրտի կակիծով» տեսած էր, թէ «Կիլիկիան հայութիւնը հոգեւոր եւ կրթական արժանաւոր պաշտօնէն չզոյլութեանէն կը տառապէր»⁶⁷³: Ուստի, «պէտքերն մասամբ գոհացում տալու նպատակաւ» կարելին ըրած էր, բայց չէր յաջողած: Քանի որ երկրին բազմաթիւ կացութիւնը, Կաթողիկոսարանին եւ առհասարակ կիլիկեցիներուն աղքատութիւնը անյաղթելի արգելքներ յարուցած էին համեստ բաղձանքին առջեւ⁶⁷⁴: Կաթողիկոսը «ի սպառ աննպաստ պայմաններու ներքեւ ու առանց արտաքին օժանդակութեան» հաստատած էր դպրանոցը⁶⁷⁵: Անիկա 1906-1909 տարիներու նախախարիքը ընծայելու կը պատրաստուէր: Նաեւ կար յոյսը, թէ շուտով գումարելի Կիլիկիան թեմերու պատգամաւորական

ժողովին՝ ընդհանրապէս Կիլիկեան կրթական գործին եւ ի մասնաւորի Մայրավանքին «արժանավայել» ծառայութիւնը վերահաստատելու որոշում առնուէր, ու ահա վրայ կը հասնէր Աղէտը ու «վերիվայր» կը շրջէր ամէն ինչ⁶⁷⁶:

1909-էն ետք, Կաթողիկոսը պիտի խանդավառուէր «Կիլիկեան ձեմարան» մը բանալու ամերիկայէն եկած գաղափարով մը⁶⁷⁷: Իր փափաքը պիտի ըլլար, որ այն ճեմարանը Մայրավանքին մէջ հաստատուէր, բայց գաղափարը յայտնողներուն նախընտրութիւնը Այնթապը մնար: Գաղափարն մարմին պիտի չառնէր երբեք...

Յուսահատութեամբ յղի օրերուն մէջ, մխիթարութեան շող մըն էր Հաճընի Աղջկանց Վարժարանի շինութեան նախաձեռնութիւնը՝ տեղւոյն Առաջնորդին՝ Պետրոս վրդ. Սարաճեանի կողմէ (ապագայ Աթոռակիցը ու ետքը՝ Գահակալը Կիլիկիոյ): Նախաձեռնութեան յայտարարութիւնը կատարուած էր 1912-ին Սահակ Կաթողիկոսի ի Հաճըն Հովուպետական այցելութեան առիթով⁶⁷⁸: Վարժարանը Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից պիտի բարձրանար եւ մէկուկէս տարուայ շինութեան աշխատանքէ մը վերջ՝ 1914-ի վերջաւորութեան աւարտէին գործերը: Ինչպէս նկարագրուած է՝ «եօթի յարկեան փառաւոր, հոյակապ վարժարան մըն էր» անիկա, որ ի յիշատակ Գիրի Գիւտի՝ Սահակ-Մեսրոպեան անունով մկրտուէր⁶⁷⁹:

Եկեղեցւոյ վիճակը: Կիլիկիան ամէն զրկանքներու հետ նաեւ զուրկ էր իր մայր եկեղեցւոյ մխիթարութենէն⁶⁸⁰: Քանդուած եկեղեցիներ, փակուած ու փակուող եկեղեցիներ: Եւ շատ քիչ՝ եկեղեցականութիւնը:

1911-ին, Ս. Լուսաւորչի Մուան ի Վիրապն տօնին օրը, Սահակ Կաթողիկոս Մայրավանքին մէջ 3 եպիսկոպոսներ (Ատանայի Առաջնորդ՝ Տ. Ներսէս ծ. վրդ. Դանիէլեան, Եոզկատի Առաջնորդ՝ Տ. Խորէն ծ. վրդ. Դիմաքսեան, Կաթողիկոսական փոխանորդ՝ Հրանդ ծ. վրդ. Կարոյեան — այս վերջինը պիտի վերանուանուէր՝ Եղիշէ) օծած էր: Նախքան օծումը զանոնք յորդորելով՝ ըսած. «Վիճակիս եպիսկոպոսական պակասը լրացնելու ժամը հասած է: Կիլիկիոյ եկեղեցեաց կարօտութիւնը այնքան բազմազան եւ պէտքը այնքան բազմատեսակ է, որ ձեր գործունէութեան ասպարէզը սահմանափակել անհնար է»⁶⁸¹: (Այս եպիսկոպոսներէն Ներսէսն ու Խորէնը նահատակուեցան Մեծ Եղեռնին):

Քահանաները սակաւաթիւ, առհասարակ տարեց, անճարակ, անօթի ու թշուառ էին⁶⁸²: Քահանայ մը ահագանգած է, գրելով. «Արթննալու եւ ոգեւորուելու ժամանակն է, երբ տակաւին ատեն կայ (...) Կիլիկիոյ այս արկածեալ վայրերուն մէջ եկեղեցիներու գոցուիլը՝ ապագայ փակումներու նախաքայլերն են միայն»⁶⁸³: Եւ յիշեցնելով Կաթողիկոսին կոչը, որ ժողովուրդի հոգեւոր պէտքերը հոգալու համար տարեկան 164 լիրայի անհրաժեշտութիւնը շեշտած էր, առաջարկած՝ «անհրաժեշտ է հաւատացեալ եկեղեցասէրներէ կազմուած ընկերութիւն մը, որուն նպատակը պէտք է ըլլայ ներքին առաքելութիւն, որ բոլոր մեծ եկեղեցիներու մէջ գոյութիւն ունի: Եւ այն կազմակերպութիւնը պէտք է աշխատի ժամանակի ոգւոյն համաձայն ուսեալ ու գարգացեալ եկեղեցականներ պատրաստել, եկեղեցւոյ կեանքին ջիղը՝ բեմը գորացնել, կրօնական զգացումը ժողովուրդի սրտին մէջ վառ պահել, անհովիւ մնացած ժողովուրդներու քահանայ հասցնել, աւետարանական առողջ սկզբունքները տարածել, եւ մէկ խօսքով՝ հոգիի կենսական պէտքը հոգալ»⁶⁸⁴: Կո-

չէն տարի մը պիտի անցնէր, երբ Ամերիկայէն երկու նուիրատուներ ընդառաջէին Կաթողիկոսի կոչին⁶⁸⁵:

Սակայն քահանային երազանքը մոռցուէր...

Յիշատակելի է 20 Ապրիլ 1914-ի Միւստինի Օրհնութիւնը: Սահակ Կաթողիկոս իր գահակալութեան առաջին տարին կատարած էր սրբազան արարողութիւնը, սակայն «յաջորդական պատահարներ» ի դերեւ հանած էին «ժողովրդեան բարեպաշտական ակնկալութիւնը»⁶⁸⁶: Միւստինի Օրհնութեան համար այս խորհրդածութիւնը ըրած է Հալէպէն՝ Սասկան վարդապետ. «Էջմիածին իր Ս. Միւստինի ծաղիկները կը քաղէ Արարատայ լանջերէն, Աւարայրի դաշտերէն, Տղմուտի ափերէն, ուր կարմիր Վարդաններ են ինկեր, հայ ցեղիս լոյս հաւատքին համար: Կիլիկիոյ Հայրապետանոցն ալ իր Ս. միւստինի ծաղիկները, զմպուլները կը քաղէ երբեմնի Հայութեան փառքը պանծացնող Միսուանիս առիւծներու սարերէն, Ատանայի կարմրաներկ դաշտերէն, Սիհունի ու Յիհանի ափերէն: Երկուքին ալ Միւստինի ծաղիկները սուրբ են ու նուիրական. անոնք հայ նահատակներու արիւնովն են ծիր ու բողբոջէր, հայ արեւովն ու շնչովն են աճեր (...) հայուն միւստինն է ան, բիւրուցս բիւր հայ մարտիրոսագրութեան կեանքի ցօղովն է շաղախուն»⁶⁸⁷:

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ.

ԱՂԲԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 665.- ՕԱԳ, յոդ. 3122, u 5447:
- 666.- Ն, u 5446:

- 667.- Անդ:
- 668.- Զապէլ Եսայեան, Նամակներ, Երեւան, 1977, է 102:
- 669.- Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին Սրտառուչ Կոչը, Տաճար, 5 Յունուար, 1911, է 213: Յետ այսու շաբաթաթերթին յղումը՝ Տ:
- 670.- Կիլիկիա Հոգեւորապէս Եւ Նիւթապէս, Տ, 14 Յունուար, 1912, է 29:
- 671.- Անդ:
- 672.- ԿՊԿ u 915:
- 673.- ԿԿ, է 96:
- 674.- Անդ:
- 675.- Անդ:
- 676.- Անդ:
- 677.- Ն, է 98, 99:
- 678.- ԿՊԿ, է 912:
- 679.- Անդ:
- 680.- ԿԿ, է 90:
- 681.- Կարապետ Քեհնյ. Երեւան-Եան, Եպիսկոպոսական Ձեռագրութիւնը Սոյ Մայրավանքին մէջ, Տ, 16 Ապրիլ, 1911, է 229:
- 682.- Յարութիւն Քեհնյ. Եսայեան, Կիլիկիոյ Մէջ հոգեւոր Եւ Բարոյական Տագնապալի Վիճակ, Տ, է 4 Սեպտեմբեր 1911, է 545:
- 683.- Ներսէս Քեհնյ. Թավուզեան, «Եկեղեցիները Հետզհետէ Պիտի Գոցուիլն», Տ, 21 Յունուար 1912, է 44:
- 684.- Ն, է 41-45:
- 685.- Զարմայր Քահանայ, «Ո՛չ, Պէտք Զէ Գոցուիլն Եկեղեցիները», Տ, 10 Մարտ, 1912, է 137:
- 686.- Սահակ Կաթողիկոս, Շրջաբերական, Տ, 20 Մարտ, 1920, է 103:
- 687.- Սասկան վարդապետ, Ս. Միւստինի Օրհնութիւնը Կիլիկիոյ Մայրավանուց Մէջ, Տ, 1 Ապրիլ 1914, է 128:

Annual Valentine's Ball
FEBRUARY 10, 2018
At the Chateau Royal Reception Hall
3500, boul. Du Souvenir, Chomedey, Laval

Կազմակերպութեամբ՝
Լաւալի Հայ Կեդրոնի

Մասնակցութեամբ՝
ԱՐՄԷՆՉԻԿ Եւ Իր Նուագախումբին
Լոս Անճելոսէն
Մուտքի նուէր \$95.00
12 տարեկանէն վար փոքրեան \$50.00
VIP TABLES AVAILABLE
Տոմսերու համար հետաձայնել
Յասմիկ Պիլեմեանին
(450) 682-5231
Վահան Վարդանեանին
(514) 804-1696
FIND US ON FACEBOOK:
ACC LAVAL

SPECIAL OFFER! CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!
A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!



Aline Shnorhokian
Mortgage Advisor
Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com



Groupes Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7



ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilanian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!*





VÉHICULES D'OCCASION
CERTIFIÉS

GABRIEL

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com



École De Conduite
Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamoni
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available
in Armenian, Arabic,
English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000



NETTOYEUR
MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Linda Kharaboyan Notaire
Notary

Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ մեզի
Vos affaires. À cœur.

Therrien Couture
3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal
(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction

647 Boul. Decarie
V.L. Montreal QC
H4L 3L3
photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

KRIKOR ABRKIAN **VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI
MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատությունը կարիքը ունի
20 հայ թարսի վարորդի Միրապել շրջանին մեջ:
Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**




Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUFRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



CENTUM™
Metroapp Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ԳՐԱԻՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀՄԸՄ Գանատա - 100 ամեակ
Օնթարիո եւ Քեպեգ
 23 կամ 25 նոյեմբեր 2018

ՄՈՆԹՐԷԱԼ

ՀՕՄ-ի «Սուէ» մասնաճիւղի 60-ամեակ
 Կիրակի, 6 Մայիս 2018

ԼԱԻԱԼ

ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի 25-ամեակ
 Շաբաթ, 29 Ապրիլ 2018

ՄՈՆԹՐԷԱԼ

Համագգայինի վերանորոգում «Մուշեղ Իշխան» գրադարանի ճարտարապետական կառուցումը. - Յունուար եւ Փետրուար: Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը կ.Ն. Ժամը 12:00-4:00 իսկ Կիրակի օրերը առաւօտեան Ժամը 11:00-էն կ.Ն. Ժամը 2:00: Մոնթրէալի Հայ կեդրոն, գետնայարկ, ՀՕՄ-ի Ծաղկոցին կից - 514 337-7753: Գրադարանը բաց է գրասէր հասարակութիւնը գոհացնելու համար:

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Աստուածաշունչի սերտորոշում 2 խմբակները արդէն իսկ վերսկսած են իրենց երկշաբաթական հանդիպումները՝ հոգարարութեան ժողովարահէն ներս.

- «ՆՈՐԱՎԱՆՔ» խմբակ, 16-25 տարեկան երիտասարդ/երիտասարդուհիներու համար՝ Կիրակի առաւօտեան Ժամը 9.45-10.45
- «ՆԱՐԵԿ» խմբակ, 26-40 տարեկան երիտասարդ/երիտասարդուհիներու համար՝ Կիրակի առաւօտեան Ժամը 10.00-11.00:

Հզոր թուականները գիտնալու եւ յաւելնելու մանրամասնութեանց համար հեռաձայնել եկեղեցւոյս դիւանատուն. 514 331 5445 կայան 202՝ Կարո Սրկ. Նոյնուտեանին:

ԼԱԻԱԼ

ՀՄԸՄ Գանատայի Շրջանի 48-րդ մարզական խաղերը, որ նուիրուած է ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակին, տեղի պիտի ունենան Լաւալի մէջ, 31 Օգոստոսէն մինչեւ Սեպտեմբեր 3, 2018ը:

Հրահարուած են մեր սիրելի հայրենակիցները, երկուշաբթի 5 Փետրուար 2018, երեկոյեան Ժամը 7:00-ին, Լաւալի Հայ կեդրոնի Պարտնեան սրահ տեղեկութիւններ ստանալու համար ապագայ գործունէութեան մասին ու ներդրում բերելու իրենց նախասիրած յանձնախմբային աշխատանքներուն մէջ: Յաւելնելու մանրամասնութիւններու համար հանեցէ՛ք հեռաձայնել՝ Քոյր Սոնա Լախոյեանին՝ 514 979 6272

ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն բարի ապափնում կը մաղթէ ընկ. **ԶԱՐԷՀ ՄԷԼԷՔԵԱՆ**ին:

ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

«Հորիզոն»ի խմնագրութիւնը բարի ապափնում կը մաղթէ իր իրկարամեայ աշխատակից Դալար Հարպոյեանին:

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ

Մարզական եւ Սկաւտական արձանագրութիւններ ամէն երեկոյեան Ժամը 7-8, **հեռաձայնել** 514 979-6272 եւ 514 295-3245, Homenetmen Laval Դիմատետրի (Facebook) էջով

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16	Շաբաթ- առաւօտեան Ժամը 8:30-ին (առաջին սփռում)
Bell Fibe: HD1216 կամ SD216	Հինգշաբթի- երեկոյեան Ժամը 8:30-ին

Ուղիղ արձակում՝ www.icitelevision

Voyages HAIG Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱՒԳՈՅՆ ՍՊՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Ascenseur Adams Elevator Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.

Eddie, Pedro, Joyce Oughourlian

horizon

HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly
 Publié par / Published by Les Publications Arméniennes (1991)
 3401, Olivar-Asselin Montréal, Québec Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
 2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
 1^{re} classe - 1st class: \$95

États-Unis / USA
 1^{re} classe - 1st class: \$95 US

Ailleurs / Elsewhere
 1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
 Sylva Eshradjian-Bachekjian (General Manager)
 Tél.: (514) 332-3757
 Télécopieur/Fax (514) 332-4870
 E-Mail: sylva@horizonweekly.ca
 Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail
 Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ խմբագիր՝
 Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
 Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
 Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքահամեան, Թինա Սիլվահեան
Չեաւտրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիգեան

Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le gouvernement du Canada

Funded by the Government of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ




ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Այս շաբաթ խիստ զբաղած պիտի ըլլաք ընկերներուդ եւ բարեկամներուդ հետ, հետեւաբար գործերդ լաւապէս դասաւորել, որպէսզի արգելք չհանդիսանաք քեզի եւ ծրագրերուդ: Համեմատելով ժամանակ պիտի անցընես ընկերային շերտ մթնոլորտի մը մէջ:



ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Չնախատեսուած հարցեր եւ դժուարութիւններ պիտի ունենաս այս շաբաթ: Պատրաստ եղիր: Լաւապէս քննարկել եւ հանգիստ ըրել, որպէսզի կարենաս այս դժուար ժամանակաշրջանը յարթահարել, առանց առողջութեանդ վրայ վատ անդրադարձ ունենալու:



ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Կատարեալ հանգիստի շաբաթ մը պիտի ըլլայ այս շաբաթ: Գործերդ սկիզբէն կարգաւորած ես, դասաւորած եւ գրեթէ ամբողջացուցած: Կարելի է ընտանեկան պտոյտի մը ձեռնարկել, որպէսզի վերաթարման ձեր յարաբերութիւնները:



ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Վերջերս սկսած ես մարզանքի հետեւիլ, շարունակե՛ս այս ընթացքդ, հոգեկան եւ ֆիզիքական բաւարարում պիտի գզաս: Այս ապրելակերպը կ'օգնէ քեզի, որպէսզի անելի լաւապէս դասաւորես ժամերդ եւ աշխատելու օգտագործես զանոնք:



ԱՌԻԻԾ (24 Յունիսէն 23 Օգոստոս) - Շուրջիններդ մեծ հաճոյքով կը լսեն պատմութիւններդ, լաւ պատմող մըն ես: Հետեւաբար այս շաբաթ կրնաս ընկերային հաւաքոյթներ կազմակերպել տանդ մէջ եւ հաճելի ժամանակ անցընել ընկերներուդ եւ հարազատներուդ հետ:



ԿՈՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Այս շաբաթ երեկոյթի մը պիտի հրաւիրուիս, ջըլլայ որ մերժես հրաւերը, մանաւանդ եթէ ամուրի ես, մեծ հաւանականութիւն կայ, որ հոն հետաքրքրական հանդիպում մը ունենաս: Հաճելի անակնկալներ կը սպասուին այս շաբաթ:



ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) - Չափազանց յոգնեցուցիչ շաբաթ մը պիտի ըլլայ այս շաբաթ: Ահագին գործեր ունիս կատարելիք, ամբողջ շաբաթը պիտի կեդրոնանաս աշխատանքներուդ վրայ, սակայն շաբաթավերջին պիտի կարենաս հանգստանալ:



ԿՈՒԻԾ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Կազմակերպել բոլոր աշխատանքներդ եւ դասաւորել ըստ առաջնահերթութեան: Գործ մը չամբողջացուցած յաջողրին մի՛ սկսիր, որպէսզի թերի ջըլլան: Յաջողութեան բանալին լաւ ծրագրաւորումն է յարատեւութեան մէջ կը կայանայ:



ԱՂԵՂԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Շուրջիններդ ծանձրացած կը թուին ըլլալ միօրինակութենէն, կը սպասեն, որ դուն ըլլաս նորութիւններու նախաձեռնողը, հետեւաբար մի՛ գլանար անոնց այս հաճոյքը: Շուտով հաւաքոյթ մը կազմակերպել եւ զուարճացուր զիրենք:



ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Դժբախտ միջադէպ մը պատճառ պիտի ըլլայ տրամադրութեանդ անկումն: Ամբողջ շաբաթը խանգարուած վիճակ մը պիտի ունենաս: Ասկայն զգոյշ, որ երկար չազդէ վրադ այս մէկը, փորձել շուտով թօշափել զայն:



ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Ընկերներդ եւ բարեկամներդ գաւազան հաւաքոյթներ կը կազմակերպեն, արհեստ որ ընդհանրապէս կը ստիպուիս մերժելու, որովհետեւ խիստ զբաղած ես: Հոգ չէ, նախ գործերդ կարգաւորել, ապա մտածել ընկերային կեանքին մասին:



ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Դասաւորել՝ գործերդ, որպէսզի իրարու վրայ չդիպուին, այն ատեն շատ անելի դժուար պիտի ըլլայ զանոնք դասաւորելն ու ամբողջացնելը: Շաբաթավերջը տրամադրել ընտանիքիդ եւ հարազատներուդ, անոնք քեզի հետ ըլլալու կարիքը ունին:

ՀՈՐԻԶՈՒՆ Առիթնաւորներ

Յովհաննէս Նաճարեան 50

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Տիգրան Միսիրեանի մահուան առիթով: Բոպէր, Յասմիկ Միսիրեան, զ.կ.թ. 200

Զարեհ, Իգա Միսիրեան 100
Բաֆֆի, Ալին Միսիրեան 100
Տ. եւ Տ. Լեւոն Գալիֆեան 100
Անդրանիկ, Սեդա Գազարեան 100
Արփի, Յասմիկ Գաբրիելեան 50
Վարուժան Գանձապետեան, ընտ.թ. 50

Գրիգոր Գանձապետեան, ընտ.թ. 50
Յարէթ ձանեան 20
Տ. եւ Տ. Աւետիս Չէրքէզեան 100
Լիւթիկ, Սիւզան Սալո 100
Տ. եւ Տ. Պետրոս Չէրքէզեան 100
Տ. եւ Տ. Աւետիս Գալիֆեան 100
Տ. եւ Տ. Յարութ Գոստաբեան 30

Հնէնի Ապու Ֆայսալ Միսիրեան 100
Փամբլա Կիւլպէնջեանի մահուան առիթով:
Գարուստ, Սեդա Կիւլպէնջեան 100
Արթուր, Թամար Օլիմանեան 40
Պետրոս, Մայտա Գաբրիելեան 25
Սարգո Պոյանեան Վերքէմպուրի(25

Տօքթ. Ե. Տիկ, Անրէլ Պէշեան 30
Mr. & Mrs. Marc Moussallie 100
Mr. & Mrs. Farjallah Moussallie 100
Mr. & Mrs. Bassam Maghamez 100
Շանթ Մանուկեան 25
Կապի, Արմիկ Սալամէ 30
Բաֆֆի, Դոնալդ Հանձեան 20
Mr. & Mrs. Edouard Habelrih 50
Մարտիկ, Աննա Ռեանեան 100
Բիթմա Օճանեան 50

Ճէրի, Թային Տէօօլէթեան 50
Տ. եւ Տ. Մանուէլ Քէօսեան 20
Mr. & Mrs. Wadid Moussallie 50
Տ. եւ Տ. Յակոբ Պուլկարեան 100
Tivin Turchiaro 200

Քրիսթին Կիւլպէնջեան 100
Յակոբ, Արփի Այնթէպեան, ընտ.թ. 100
Տիանա Թաշեան Փափազեանի մահուան առիթով:
ՀՈՒՄ Մարգարիտ տնօրէնութիւն եւ անձնակազմ 70

Ս. Պատիկ 50-ամեակի առիթով:
Զոյգ մը 100
Ուրբի մը առիթով:
Մի ոմն 35

Հօր յիշատակին:
Բարեպաշտուհի մը 20
Եկեղեցւոյ Պայծառութեան
Տ. եւ Տ. Յակոբ Մարտիրոսեան 20
Ժան Ա. Սրկ. Ռանձեանի 40-ին
Տ. եւ Տ. Արթիւն Ռանձեան, Աթոժ Էկոյեան զ.կ.Արշիլ 500
Տ. եւ Տ. Յակոբ ձաղ Ռանձեան զ.կ.թ. 50

Աւետիս, Արտեմիս Գազարեան եւ ընտ.թ. 200
Ժողէֆ, Շուշան Էկոյեան 200
Տէօօլէթեան ընտ.թ. 100
Իսիկեան ընտ.թ. 50
Վահան Սրկ Շաբարեան եւ ընտ.թ. 30
Տ. եւ Տ. Ժան Բրտոսեան եւ զ.կ.թ. 50
Տ. եւ Տ. Տ. Տրաշ Մուրատեան եւ զ.կ.թ. (Գալիֆեանի) 50
Մարի Ազգարեանի Ա.տարելիցին, նաեւ Յակոբ Ազգարեանի 14-րդ տարելիցին եւ Արշալոյս Արշիլեանի 40-ին (մահացած՝ լոս Անձըլս)

Ռուբէն, Շուշան Ազգարեան, զ.կ.թ.՝ Յակոբ, Գարին 100
Ռաֆֆի, Փօլա Ազգարեան, զ.կ.թ.՝ Մարի, ձեպքա 100
Ժիրայր, Հուրի Չաբարեան 40
Յովհաննէս Կիւլպէնջեանի 30-րդ տարելիցին, նաեւ Կիւլպէնջեան եւ Արշալոյսեան զերգաստանաց ննջեցելոց՝

Գարեգին, Նորա Կիրանյան 50
Վարուժան, Սիլվիա Կիրանյան 50
Յակոբ Քէօսեանի 7-րդ ծառայելիցին՝ Լենա Քէօսեան եւ զ.կ.թ.՝ Լորի եւ Արի 100
Գէորգ, Մարալ Քէօսեան եւ ընտ.թ.՝ Անի 100
Մովսէս, Վանտա Քէօսեան 75
Արի, Մարիս Գուրճեան 50
Սեւակ, Լենա Չոբարեան եւ զ.կ.թ. 25
Մանուէլ, Թային Քէօսեան եւ զ.կ.թ. 50
Բժ. եւ Տիկին Ռուբէն Պետրոսեան եւ զ.կ.թ. 50
Թազուհի Մարտիրոսեան եւ զ.կ.թ. 20
Վիզին, Գանիա Քէօսեան 50
Հայկանուշ Արիկեան եւ զ.կ.թ. 40
Յովհաննէս Գազանձեանի, Սարգիս, Սնան, Ռոստոմ Ասատուրեաններու, Ալմաստ Եղիայեանի Հոգաց Լեւոն, Վարսենիկ Գազանձեան 40
Արշալոյս Ռաջատուրեանի Հոգայն Բաֆ, Գրոտ Պէնիս եւ զտերթ 20
Յակոբ Փնձոյեանի Հոգայն Յակոբ, Շաքէ, Մարտիրի-Յակոբ Փնձոյեան Պոլոսեան 20
Կարապետ, Երանուշ, Մարի, Հայկուհի, Ստեփան, Յովհաննէս եւ Յարութի Ազատեաններու, Սեդրաք եւ Մարի Հայկանձեաններու Հոգաց Յակոբ Նարեկեան 25
Սրկ. Յակոբ Ասատուրեանի Հոգայն

Շաքէ Պէնեան եւ զ.կ.թ. 100
Եսթեր Ապի Նարբի Ա.տարելիցին, Մարի, Սամուէլ, Սեւակ ձիւհանջաւաններու Հոգաց Նուպար, Կարօ, Սիլվիա ձիւհանջաւաններ 60
Գրիգոր Չաքեանի 40-ին Շանթ, Ռոզէլիա Ջուլիան 20
Արրահամ Էլչէնձեան եւ զ.կ.թ. 20
Գրիգոր Չաքեանի 40-ին Շանթ, Ռոզէլիա Ջուլիան 20
Յովհաննէս Պապիկեանի, Թորոս, Մարթա եւ Անահիտ Պապիկեանի Հոգաց Մարգրիտ Պապիկեան եւ զ.կ.թ. 50
Անդրանիկ Ալլաշվերտեանի Հոգայն Հանրի, Սիւզի Ալլաշվերտեան 40
Յարութիւն, Ասրիկէ Գոճազեան 10
Յովհաննէս Պապիկեանի, Թորոս, Մարթա եւ Անահիտ Պապիկեանի Հոգաց Մարգրիտ Պապիկեան եւ զ.կ.թ. 50
Ժողէֆ, Նորա Ազգար 30
Տ. եւ Տ. Անդրանիկ Բզմիրեան եւ զ.կ.թ. 25
Տ. եւ Տ. Անդրանիկ Բզմիրեան եւ զ.կ.թ. 25
Յակոբ, Մարալ Ուրբեաններու Անթունիէթ Ուրբեան եւ զ.կ.թ. 40
Ճորձ, Ժիւլիէթ, Կարապետ, Կիւլպէնջեանի Հոգաց Ռոզէլի, Ռոզէլի եւ Ռոնէլ Սատուեաններ 200
Միլտա Տատիկեան Նալպետեանի 5-րդ տարելիցին (մահացած Հայէպ) Գէորգ, Լուի, Գրօ Նալպետեան 15
Ճորձ Գանձեան եւ զ.կ.թ. 25
Անահիտ Պապիկեանի 40-ին (մահացած Աւտարիա), Յակոբ Գանձեանի 17-րդ տարելիցին Ճորձ, Յասմիկ Գանձեան եւ զ.կ.թ. 25
Սոնա Գանձեան եւ զ.կ.թ. 50
Ռաֆֆի, Նանոր Չաբարեան 20
Գէորգ Նալպետեան եւ զ.կ.թ. 15
Տ. եւ Տ. Մանուէլ Քէօսեան 20
Երուսաղ Պէրպէրեանի Հոգայն Շաքէ Պէրպէրեան 200
Արթիւն Մաղաբեանի Հոգայն Ազգայեան ընտանիք 100
Վիզին Թիւֆէնջեան 100
Սիլվիա Քալէշեանի Հոգայն Տ. եւ Տ. Ջօհրապ Նապեան եւ զ.կ.թ. 20
Ազատ, Էսթէր Բալաշեան եւ զ.կ.թ. 10
Սիրարփի Նատյան 10
Անի Նալպետեան եւ զ.կ.թ. 10
Ռաֆֆի, Թամար Կիւլպէնջեան 10
Յակոբ Քէօսեանի եւ Մարի Սէրալ-տարեանի Հոգաց Շողիք, Սօսի եւ Գէորգ Քէօսեաններ 50
Յակոբ, Մարի եւ Ալօ Շաղոմուրեաններ, Յակոբ Լուսին եւ Ստեփան Աճարեաններու Հոգաց Գօգօ, Ալիսէն Աճարեան 50
Սեդրաք եւ Մարի Հայկանձեաններու Հոգաց Գարեգին, Լիւսի, Սեւակ, Հրակ, Ռաժակ Հայկանձեան 50
Բարալ Մանուկեանի 10-րդ տարելիցին Վարդանուշ Թորոսեան, Վալինթին Մանուկեան եւ զ.կ.թ.՝ Գարոլին Մանուկեան եւ զ.կ.թ.՝ Բեմոն, Կարին Մանուկեան եւ զ.կ.թ. 150
Վիզին, Անի Սարգիսեան եւ զ.կ.թ. 40

Տէր Մեծարդ ԲՇնյ., երէցկին Հովիտի, Տիգրան Ամբիկեաններու Հոգաց Անայիա Շիրինեան 100
Աւետիս Կիւլպէնջեանի 21-րդ տարելիցին առիթով:
Ալիս Կիւլպէնջեան 20
Շուշան Աղէկեանի Հոգայն, նաեւ Աղէկեան եւ Թէլֆէյեան զերգաստանաց ննջեցելոց Կարօ Ա.Սրկ. Թէլֆէյեան, տիկ. եւ զ.կ.թ. 20
Սարգիս, Սիրանուշ, Նշան, Մարի Կէլչեաններու, Կիւլպէնջեանի, Մելքոն, Պերճուհի Ամբիկեաններու, նաեւ Ամբիկեան եւ Կէլչեան զերգաստանաց ննջեցելոց Տ. եւ Տ. Յակոբ Ամբիկեան, զ.կ.թ. 40
Սիրարփի Արոյեանի 40-ին (մահացած Պոսթըն) Տ. եւ Տ. Ռաշիկ Սեպեան, զ.կ.թ.՝ Նալբիր, Գէորգ 100
Տ. եւ Տ. Վարուժան Փանոսեան 40
Տիկ. Լուսին Քէօրոզեան եւ զ.կ.թ. 30

Ռիմա Գաբրիելեան 300
Իւրազին Տ. եւ Տ. Վահան Արմազեան 25
Բժ. եւ Տիկ. Օճան Թապարեան 100
Գոլոս, Թազուհի Աճեան 50
Անահիտ Թոսուեան 50
Էտուար ձամպազեան 60
Թէրէզ ձամպազեան 60
Թազուհի Հովուրեան 20
Հուրի Անտոնեան 20
Մայտա Պուլկարեան 35
Սիլվիա Չայն 25

Գրիգոր Մարունեան 25
Պերճուհի Մանուրեան 25
Էլվին Տէմիրճեան 50
Յովհաննէս Նաճարեան 40
Արիկ Արիտղոմեան 25
Ժան, Յասմիկ ձիւհանջեան 50
Ղազար, Սայրի Պազարեան 25
Թազուհի Մարտիրոսեան 25
Տիգրան Մանուրեանի 3-րդ տարելիցին Պերճուհի Մանուրեան, զտերթ՝ Սիւզան, Լինտա 100
Փարամազ Նաղիբեանեանի եւ Բօզ Գազարեանի Հոգաց Պերճ, Մարօ Գոգորեան, զ.կ.թ. 50
Կարապետ, Սիլվիա Նաղիբեանեան, զ.կ.թ. 150
Ճորձ, Նուարդ Իսկէնջաններու, Եսայի, Սիրանուշ Մանուկեաններու Հոգաց Տ. եւ Տ. Յակոբ Մանուկեան, զ.կ.թ. 20
Լուսին Արթիկեանի, Անայի, Կարապետ Պալիպեաններու Հոգաց, նաեւ Արթիկեան, Պալիպեան զերգաստանաց ննջեցելոց Ճորձ, Տալիտա Պալիպեան, զ.կ.թ.՝ Տ. եւ Տ. Մոսիկ Պալիպեան, զ.կ.թ. 60
Տ. եւ Տ. Գօգօ Արթիկեան, զ.կ.թ. ամ 20
Ազնիկ Մանուկեանի Ա. տարելիցին, Եսայի, Արշալոյս Մանուկեաններու Հոգաց Նրաշ, Գարօ Չոփեան, զ.կ.թ. 25
Արրահամ Ատուրեանի մահուան առիթով: 40-ին Արսէն, Նաղիկ Փիլաֆեան 20
Յակոբ, Թամար Սուլեան, զտերթ 20
Ռահէլ Քէլէշեան 20
Մովսէս, Սոնա Կէտիկեան 20
Վիզին Թիւֆէյեանի 6-րդ տարելիցին Սոնա Թիւֆէյեան, զ.կ.թ.՝ Նանոր, Հրակ 40
Ռաֆֆի, Նաղիկ Թիւֆէյեան, զ.կ.թ. 50
Սիլվիա Տէլիմէնձեան, Ժորձ Գուտի, ՄՇեր Թիւֆէյեան 40
Ճօ Աւարեան 20

Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԼԱԻԱԼ ՈՂ. ՌՈՒԿՈՅ ԳԱՅԹԱՆՁԵԱՆԻ մահուան 5-րդ եւ ՍՍՆԱ ԳԱՅԹԱՆՁԵԱՆԻ մահուան 8-րդ տարելիցին առիթով:
Տ. Տ. Յովհաննէս, Էլօ Գայթեանեան, Տ. Տ. Փանոս Մանուկեան, Տ. Տ. Էլբր, Մակի Գայթեանեան, Տ. Տ. Յակոբ Գայթեանեան, Տ. Տ. Սամուէլ Գայթեանեան 100
Տ. Տ. Վարդան, Մարալ Նուպարեան 30
Տ. Տ. Վրէժ Քէօշիկեան 20
ՈՂ. ԳԱՆՈՒՅՏ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով:
Տիկ. Սեդա Գրիգորեան 200
Տիկ. Մաղիկ Թապարիկ 100
Տ. Տ. Յակոբ, Անահիտ Միլանեան 20
Տ. Տ. Յակոբ, Մանուշակ Չամիչեան 25
Տիկ. Թազուհի Մանուկեան 25
Տ. Տ. Վրէժոր, Ջէփիւ Լուլու 30
Տ. Տ. Վարդան Բարախեան 30
Տ. Տ. Վարուժան Ժողիկեան 25
Տիգր Վահէ Ժողիկեան 25
Տ. Տ. Կարպիս Մէլէֆեան 30
Տ. Տ. Սաման, Ալտա Հայապ 30
Տ. Տ. Սարգիս, Սիլվիա Թապարիկ 30
Տիկ. Մանուշի Թապարիկ 25
Տիկ. Մարի Քէօրճիկեան 30
Տ. Տ. Յարութ, Ալիսա Թապարիկ 15
ՈՂ. ՕՆՆԻԿ ԺԷՊԵՏԵԱՆԻ մահուան 17-րդ տարելիցին առիթով եւ Համայն ԺԷՊԵՏԵԱՆ, ԳԱՆԻԷԼԵԱՆԻ ԳԵՆՆԱԿԵԱՆԻ ընտանիքներու ննջեցելու յիշատակին:
Տ. Տ. Գրիգոր, Մարի Ժէպէրեան 25
Տ. Տ. Տիմիթրի, Ջէփիւ Վարէլա եւ զ.կ.թ. 20
Տիկ. Էլիզապէթ Ժէպէրեան եւ զ.կ.թ. 20
Տ. Տ. Վաչէ Յարութիւնեան եւ զ.կ.թ. 25
Տիկ. Սեդա Գրիգորեան, ՈՂ. Աւետիս Մէլէֆեանի յիշատակին Տէր Ողորմես կը խնդրէ 40
ՈՂ. ՄԱՍԻՐԱՄ ՔԵՕՐՈՂԵԱՆՆԵՍՏԻԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով:
Տիկ. Ազգանուշ Տօլմաճեան-Հատիտեան 50
Տ. Տ. Յարութ, Ալիսա Թապարիկ 15
Տ. Տ. Ջարեհ, Գեղաճին Քէօրոզեան եւ զ.կ.թ. 30
Տիկ. Լուսին Քէօրոզեան եւ զ.կ.թ. 30
Տ. Տ. Փանոս, Գոհար Թօփալեան 30
Տ. Տ. Թօնի Իսկէան 20
Տ. Տ. Գէորգ Արզարեան 20
Տ. Տ. Պոլոս Գարատանայեան 20
Տ. Տ. Ռաֆֆի, Վալէրի Նուրշահեան 20
Տիկ. Էսթէրի Հաւանեան 20
Տիկ. Անձէլ Պաշքեան 30
Տ. Տ. Վրէժ, Սեւան Հատիտեան 20
Տ. Տ. Ռաֆֆի, Ալիս Հատիտեան 30
Տ. Տ. Յովիկ, Սիլվիա Պիլեմեան 25
Տ. Տ. Անդրանիկ Գալպիկեան 25
Տ. Տ. Քրիս Տօլմաճեան 50

Տ. Տ. Ֆրէտէրիք Տէլէփօլա 60
Տ. Տ. Ասատուր Եարապեան 50
Տ. Տ. Հայկ Արրահամեան 30
ՈՂ. ՊԱՂՏԻԿ ԳՕՍԹԻՔԵԱՆԻ մահուան 6-րդ տարելիցին առիթով:
ԹԱԳՒՐՈՒ, ԱՐՄԵՆՈՒԷԻ եւ ՎԻՔԻ-ԹՈՐԻԱ ԳՕՍԹԻՔԵԱՆներու, ՇՆՐՈՂԻԿ եւ ՇԱՔԷ ՀԱՄԱՐԱԶՈՒՄ-ԵԱՆներու, ՊԱՐԳԵԻ, ԷԻԶԱՊԷԹ եւ ԱՆՆԻԿ ՏԷՐԷԼԵԱՆներու, ԱՐՓԻ եւ ՍԻՐԱՐՓԻ ԳԱՌԱՄԱՆՆԻԿԵԱՆներու յիշատակին:
Տիկ. Անահիտ Գոսթիբեան եւ զ.կ.թ. 150
ՈՂ. ՇԱՐԼ ՀԱՍԱՏԻ մահուան Ա. տարելիցին առիթով:
Տիկ. Անի ձէլբեճեան 100
Տ. Տ. Ասատուր, Լենա Ալաշվերտեան 30
ՈՂ. ՆՈՒՊԱՐ ԵԿԵՂԵՑԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով:
Տիկ. Նուշիկ Չարաֆեան-Երկիրապեան, Սեւան եւ Փաթիլ 100
Տ. Տ. Ալպէր, Ժանէթ Երկիրապեան 150
Տիկ. Հիլտա Երկիրապեան եւ Թան-Խա 100
Տիկ. Շողիկ Երկիր

L'ÉVÉNEMENT
**MAÎTRISEZ
TOUTES LES
CONDITIONS
DE NISSAN**



Innové
pour exalter

GRUPE NISSAN
GABRIEL

TRACTION INTÉGRALE INTELLIGENTE **SANS FRAIS*** SUR LES MODÈLES SÉLECTIONNÉS (UNE VALEUR MAXIMALE DE 3 000 \$.)



Rogue SL illustré*

ROGUE

Location à partir de **281 \$** par mois,
avec comptant initial de 2 495 \$.

C'EST
COMME
PAYER **65 \$** /SEM. PENDANT **39** MOIS
sur le Rogue S 2018 à T.A.

OBTENEZ LA
**TRACTION
INTÉGRALE
INTELLIGENTE
SANS FRAIS***
(Une valeur maximale
de 2 200 \$.)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



Qashqai SL Platine illustré*

QASHQAI



QASHQAI 2018
VUS SOUS-COMPACT
DE L'ANNÉE



VUS COMPACT

Location à partir de **240 \$** par mois,
avec comptant initial de 2 295 \$.

C'EST
COMME
PAYER **55 \$** /SEM. PENDANT **39** MOIS
sur le Qashqai S 2017 à boîte manuelle.

OBTENEZ LA
**TRACTION
INTÉGRALE
INTELLIGENTE
SANS FRAIS***
(Une valeur maximale
de 2 200 \$.)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabriellanjou.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

Offres en vigueur du 3 au 31 janvier 2018. Les offres de location sont basées sur une allocation de 20 000 km / an (allocation totale de 40 000 / 65 000 / 100 000 km pour un terme de 24 / 39 / 60 mois) avec kilométrage additionnel à 0,10 \$ / km. Le premier paiement est requis à la signature du contrat. Les frais d'inscription auprès du RDPRM et les frais d'agent pour l'inscription (jusqu'à 77 \$ au total) ne sont pas compris et sont payables à la signature du contrat. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15 \$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. * L'offre à la location des modèles illustrés suivants : Rogue SL 2018 / Qashqai SL 2017 Platine / Micra SR 2017 à boîte manuelle / Sentra SR Turbo 2018 à boîte manuelle, pour un terme de 39 / 39 / 24 / 60 mois, équivaut à 39 / 39 / 24 / 60 mensualités de 494 \$ / 525 \$ / 283 \$ / 277 \$ (avec 0 \$ en comptant initial) lorsqu'ils sont loués par l'entremise de NCF. ** Les paiements ne peuvent être faits hebdomadairement. Ils sont uniquement mentionnés à titre informatif. * Obtenez un rabais sur la traction intégrale d'une valeur de 2 200 \$ / 2 200 \$ / 3 000 \$ / 2 200 \$ applicable à l'un des nouveaux modèles Nissan suivants : Rogue 2018 (à l'exception des modèles à T.A.) / Murano 2018 (à l'exception des modèles à T.A.) / Pathfinder 2018 (à l'exception des modèles 4x2) / Qashqai 2017 (à l'exception des modèles à T.A.). Le rabais est offert seulement à l'achat au comptant ou au financement à un taux standard par l'entremise de NCF, pour les contrats enregistrés et livrés entre le 3 et le 31 janvier 2018. L'offre consiste en un rabais qui est applicable seulement au moment de l'achat ou au financement de : (i) l'achat d'un système de traction intégrale intelligente chez un concessionnaire Nissan autorisé ; ou au (ii) prix d'achat du véhicule. ± En fonction d'une comparaison des ventes et locations au détail (excluant les ventes pour les parcs de véhicules) entre le 1er janvier et le 31 décembre 2017 de véhicules de la catégorie VUS (excluant les marques de luxe) au Québec fait par une firme indépendante de consultants. Les offres sont sous réserve de l'approbation de crédit par Nissan Canada Finance ; elles peuvent être modifiées, prolongées ou annulées sans préavis. Modèles illustrés à titre indicatif. Les concessionnaires peuvent fixer leurs propres prix. Visitez www.choisisseznissan.ca ou votre concessionnaire Nissan du Québec participant pour tous les détails. Des conditions s'appliquent. © Nissan Canada inc., 2017.



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



825 Avenue McEachran, Outremont

RÉCEMMENT
VENDU 579 000 \$

2233 Rue Du Chinook, Saint Laurent

RÉCEMMENT
VENDU 999 000 \$

514
333-3000
DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

180 Avenue Morrison, Mont-Royal

RÉCEMMENT
VENDU 2 999 000 \$

5819 Tommy-Douglas, Côte-Saint-Luc

RÉCEMMENT
VENDU 999 900 \$

Lot on Boul. Gouin O., Ahuntsic

RÉCEMMENT
VENDU 799 000 \$

8100 Av. Jean-Bourdon, Ahuntsic

RÉCEMMENT
VENDU 1 899 000 \$

1189 Ch. Lucerne, Mont-Royal

RÉCEMMENT
VENDU 699 000 \$

131 Ch. Bates, Mont Royal

PROJET DE CONDO
VENDU 100%

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIERs RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5